

# Anania t'argmanicn ew iwr grakan gorçoc' nmoysner

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Sarkissian, Parsegh (1852-1922). Anania t'argmanich ew iwr grakan gorçoc' nmoysner. 1899.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'œuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

341  
ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻԶՆ

ԵՒ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆՄՈՅՉՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԻԻԹԱՐԱՅ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1899

341



ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻԶՆ

ԵՒ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆՄՈՅՇՆԵՐ



ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻԶՆ

ԵՒ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆՄՈՅՉՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՅ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ


1899





## ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻԶՆ

# ԵՒ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆՄՈՅՁՆԵՐ



Այն բաղմաբոյլ և լուսագեղ աստղերէն մին է Անանիա, զորս հայկական գրոց գիւտի և գրականութեան սկիզբը գրած ժամանակ՝ Սահակ և Մեսրոպ՝ լուսաւորեցին և սփռեցին մեր աշխարհի հեռաւոր սահմաններուն վրայ, հոն կրկին բռնացող հեթանոսութեան մթարքն և մոլորութիւնները փարատելու համար, և որոց մտաւոր և բարոյական լուսաւորութեան ներքեւ էլաւ կանգնեցաւ մեր ազգի և աշխարհի քրիստոսապսակ և երջանկաւէտ Ոսկեդարն: Մարդկային մտաց և քաղաքակրթութեան յեղափոփոխ օրէնքն ի նկատի առած՝ զարմանք չէ, որ ինչպէս ուրիշ յառաջագէտ՝ ազգաց՝ այսպէս և մեր ոսկեդարն՝ ուշ կամ շոյտ ի թուիս կապար շլանայր և խաւարէր, այլ մեծապէս զարմանալի և նոյնքան ցաւալին այն է մեզ համար, թէ ինչպէս այն հարիւրաւոր և հազարաւոր լուսամիտ թարգմանիչներէն և գրիչներէն շատերուն գործոց հետ՝ անուանքն իսկ թաղուեցան ի վիճ մոռացութեան և խաւարի:

Սակայն ինչպէս ուսումնաստենչ ուղևորն՝ գիտութիւն և գուտեմբերգեան ջահն ի ձեռին՝ կը դեգերի անգուլ անգադար հնոյն Ասիոյ և ասորիկեան տափաստաններու և լեռնաշրջութայից վրայ, անցեալ դարուց մնացորդքն ի լոյս բերելու և ազգաց պատմութիւնը լրացնելու յուսով, այսպէս և հայազգի հնաստուղին և քննադատին անկ է, որոնեւ մեր աշխարհին կամ դրակից ապատներու և անտապատներու մէջ՝ ոսկեդարու վեճ գործիչներուն և գործոց մոռցուած յիշատակները: Այսպիսի շաւղօք և հեռաղօտութեամբ միայն կարելի է շատ բան յայտնել և անյայտ մնացելոյ կենսագրութիւնները կազմել: Յարդ տպագրուած մեր նախնեաց մատեաններն՝ իբրև սարգ նշանալոյցեր սխալ ծառային մեզ այսուհետև, և ոչ թէ ուղղիչ-

ներ: Եւ միթէ մինչեւ ցայսօր այսպիսի ջանիւք յայտնուած նորութիւնքն իսկ, որոց կորուստը դեռ տասնեակ տարիներ յառաջ կ'ողբայինք անմխիթար, նորանոր խրատոյսներ և խըթաններ չէ՛ն մեզ առ այս:

Փաշով ուղղակի մեր այս գրութեան նիւթ եղող Անանիային՝ պէտք է ըսել, թէ նա իւր հասակակից, կամ կրտսեր թարգմանչաց շատերէն աւելի բաղդաւոր է դարձեալ. վասն զի անոնց հետ՝ կարծէք թէ անուանքն իսկ մեռան ապագայից համար. իսկ սորա անուան զուգակից՝ գործերն ևս ըստ իմիք անմահացած են Հայոց հին պատմութեան մէջ: Արդիք՝ ամենաքիչ, մանաւանդ թէ ոչինչ խօսած են՝ կամ գրած այդ մեծ մարդու վրայ, որուն սակայն ինչպէս մեծ գործակցութիւնն՝ այսպէս և անունն արժան է որ հնչուէր միշտ, ազգասէր բերաններում, մեր երկրագոյն թարգմանիչներէն անբաժան:

Անանիայի կենսագրութիւնն կը պակասի մեզ ի սպառ, և հին պատմագիրներու աւանդած ցանցաւ տեղեկութիւնքն իսկ միտն են և երկդիմի: Ան՝ ոչ ոք ծանուցեր է անոր երբ և ուր ծնած լինելն, և ոչ իսկ մահուան տարին: Կորիւնէն՝ այսքան միայն գիտենք, որ նա աշխարհաւ Սիւնեցի է, և միանգամայն այր սուրբ և երևելի: Բայց թէ ի՞նչ բանով երևելի էր նա. արդեօք ազնուական զարմիւն, թէ մեծամեծ գործերովն և առաքինական վարուք: Ահաւասիկ անոր կենսագրութեան վերաբերեալ մի այլ կարևոր՝ բայց դժուարալուծելի հանգոյց:

Մեսրոպայ կենսագրին ի ստորև մէջ բերուած վկայութեան համաձայն, Անանիա՝ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուած էր նոյն իսկ նոցա Վաղինակ Բ իշխանի կենդանութեան ժամանակ, որ հլութեամբ մեծապէս նպաստեց սուրբ Մեսրոպայ հայ գրոց ուսուցումն և անկէց յառաջ այլ քրիստոնէական վար-

1. Օրինակի աղագաւ, 2. Միք. Չամչեանի եռահատոր Հայոց պատմութեան և 2. Գ. Զարբհանալեանի Պատմ. հայ. Դպրութեամ մէջ անգամ անունն և ի՞նչ յիշուած է:

2. Պատմիչս իօսելով Մեսրոպայ երկրորդ առաքելութեան մասին, այն է՝ հայ տառից ուսուցմանն ի Սիւնիս, կը գրէ այսպէս. « Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր. և անդ ընկալեալ իշխանին Սիւնեաց, որ էր վաղիմակ անուն, բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն՝ վասն իրացն առաջի արկելոցն, մինչև հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց... և ի մոցումց իսկ ի վայրեմեացն եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգէր, որոյ անունն կոչէր Ամամիա. այր սուրբ և երևելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ »:

գապետուժիւնը տարածելու ի Սիւնիս : Իսկ որովհետև այդ իշխանն յամի տեառն 415-418 տակաւին ողջ էր, և նորա եղբրական մահն յամին 420 հանդիպած կը համարի Հ. Մեք. Չամչեան<sup>1</sup>, նորա եղբորորդի Վասակ իշխանի փառամոլ և նենգամիտ քուժեամբ, հետևաբար՝ Անանիայի եպիսկոպոսական ձեռնադրուժիւնն 420 թուականէն դեռ մի քանի տարի յառաջ լինելու էր, երբ Վաղինակ ուրիշ ոչ մի քաղաքական յանցանք գործած չէր դէպ ի արքայից արքայն, բայց ի այն ձեռնառուժեանէն, զոր ցոյց տուաւ Հայոց Ազգմոսին, ծաւալելու ազատաբար իւր իշխանութեան վերաբերեալ 12 գաւառաց մէջ հայկական տառերու և քրիստոնէութեան վարդապետութիւնը, զոր Պարսից արքայն և անոր կուսակից Հայերը թերեւս վնասակար կը տեսնէին Արեաց ազգեցութեան : Դիտելով որ այս դէպքերէս առաջինն, այսինքն է՝ հայ տառերու ուսուցումը, յամին 412-415 հաղիւ թէ կարող էր Սիւնեաց և Աղուանից սահմաններուն վրայ կատարուած լինել. ապա ուրեմն Անանիայի եպիսկոպոսական ձեռնադրուժիւնն իսկ հաւանորէն այս միջոցիս եղած լինելու է :

Հ. Ղ. Աւիշան ևս յիշեալ հրատարակութեան մէջ, յէջ 20, կարգելով սիսական եպիսկոպոսաց ցանկը, Անանիայի եպիսկոպոսական ձեռնադրուժիւնը կը դնէ յամին 415, և անմիջապէս կը յարէ, « Կարգեալ ի Վասակայ » : Հեղինակին չափերաի մէջ առնուած խօսքերն՝ չեմ կարծեր, որ մի այլ պատմական յիշատակարանի վրայ հիմնուած լինին, քան ինչ որ կ'աւանդէ Ստ. Օրպէլեան (Պատմ. հա. Ա. գլ. ԺԶ) իր իննագարեան բացակայութեանէն, ըսելով. « Քանզի ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ յայսմ աշխարհի, յաւերմանէն Անգոկայ մինչև ցտէրութիւն Վասակայ » : Սակայն դիտելով որ Կորիւն իբրև ժամանակակից՝ յիշեալ տեղւոյն մէջ, - եթէ

1. Պատմ. հայոց. հա. Բ. էջ 11 : Հ. Ղ. Աւիշան (Սիսակամ, էջ 11) յամին 410 կը դնէ Վաղինակ Բի մահը. իսկ Սիւնեաց իշխանաց ժամանակագրական ցանկին մէջ այլ 401ին, և ապա յամին 402 կը նշանակէ Վասակ Սիւնիին անոր յաջորդելը : Արդ, մեծանուն Հարցս առաջնոյն նշանակած թուականը գրեթէ 5 տարիով աւելի դէպ ի այսր ձգուած է. իսկ վերջնոյն՝ նայնչափ պակաս : Գալով Հ. Աւիշանի մեզ ներկայացուցած վերջին տարեթուին, կարծեմ թէ ապագրական վրիպակաւ փոխանակ 410ի՝ 401 եղած է : Յամենայն դէպս՝ կը հակառակի Կորեան, որ զրոց գիւտէն վերջ կը պատմէ Մեսրոպայ երկրորդ առաքելութիւնն ի Սիւնիս և Վաղինակ իշխանի աջակցութիւնը. մինչդեռ 401 թուականը՝ զրոց դիւտէն 5-7 տարի յառաջ կ'իյնայ :

## Ը

բնագիրը խանգարուած է չէ, — ուղղակի Վաղինակ իշխանի ձեռքով կարդեալ կ'աւանդէ զայն, և ոչ եթէ Վասակայ, որուն պատմութիւնը յաջորդ պարբերութեան մէջ կ'ընէ, « Յորում ժամանակի պարգևեալ յԱստուծոյ » բառերով: Կորեան այդ երկու պարբերութեանց մէջ աւանդած դէպքերն՝ իսկապէս բոլորովին տարբեր ժամանակի կը վերաբերին, և պէտք չէ բնաւ իրարու հետ նոյնացնել: Իսկ որովհետև ըստ այսմ՝ ոչ Վասակ յամին 402 կարէր յաջորդած լինել Վաղինակին, և ոչ այլ Անանիա՝ Վասակի իշխանութեան 15 տարւոյն եպիսկոպոս կարգել. ուրեմն աւելի հաւանական է որ կատարուած լինի այն Վաղինակ Բի 15 տարին, այն է՝ յամին 415: Հաւանական է նոյնպէս որ այս թուականին կամ յաջորդ տարւոյն մէջ հանդիպած լինի Վաղինակի մահը, և այդ պատճառաւ իսկ Կորիւն կարծէք թէ իրարու հետ միաժամանակ միացնել ուզած է վերոյիշեալ դէպքերը:

Անանիայի եպիսկոպոսութեան այս ըստ բաւականին որոշ թուականն առնելով իբր եզր բաղդատութեան, կարելի է անով որոշել մերձաւորապէս նաև անոր ծննդեան և մահուան թուականները: Բնականապէս պէտք է գիտել, որ եպիսկոպոսութեան մեծ պաշտօնն և պատիւն ստանձնելու համար՝ լինելու էր Անանիա 30-40 տարեկան, այնու մանաւանդ՝ որ ոչ Կորիւն և ոչ այլ ոք ի պատմագրաց յիշած է երբէք Գրիգորիսի կամ Ներսէսներու նման՝ անոր ևս մանուկ հասակի մէջ ձեռնադրուած լինելը, կամ մակնոշկ յորջորջին, ինչպէս յորջորջուած են « մակնոշկն Գրիգորիս, մակնոշկն Վասակ », և այլն, այսպիսի սրարագայից մէջ: Մեր ենթադրութիւնն անով իսկ աւելի կը հաստատուի, գիտելով որ Անանիա՝ Ս. Մեսրոպայ նախկին աշակերտներէն մին էր և անոր առաջին քարուղութեան չքնաղ երախայրիք, որոնք Գողթնեաց անապատներու մէջ ճգնողական վարուք և բոկոտն անոր շուրջը կը բոլորէին, ինչպէս ի հնումն Աղիա Թեսալացոյ դպրոցն՝ ի Կարմէլոս: Իսկ արդ Մեսրոպայ աշխարհիկ վիճակէն յանապատս Գողթնեաց քաշուիլն եղաւ, ըստ Կորեան 2, գրոց գիւտէն 10

1. Այս մասին՝ զիտողութեան արժանի է Մեսրոպայ կենսագրութեան համառօտ խոբագրութիւնն, ուր բնաւ յիշատակութիւն չկայ ոչ Անանիայ և ոչ ուրիշ ո՞ր և է եպիսկոպոսի ձեռնադրութեան ի Սիւնիս. այլ խօսքը սեփականելով Աղուանից, կ'ըսուի, « Աւանդ նորոգէր գնչանագիրս և զուսուլնասիրութեանն աւանդ՝ դառնայր ի Հայս »:

2. Որ կը գրէ. « Աւարդ լինի համար հաւատոց երանելոյն՝ ամբ քառասուն և ճիւղ, և ի դպրութենէն Հայոց մինչև սվախհան սրբոյն՝ ամբ երեսուն և ճիւղ »: Աւարդ, 45-55=10:

տարի յառաջ, այն է՝ յամի Տեառն 394, և քիչ վերջ այլ աշակերտներ հաւաքելն, այսինքն է՝ յամին 396. հեռաւարս այս ժամանակ և այսպիսի կենաց Մեսրոպայ կցորդ լինելու համար՝ Անանիա Սիւնեցին 16-18 տարեկան լինելու էր, որով և նորա ծնունդը մերձաւորապէս 380-382ին:

Որոնենք այժմ՝ նորա մահուան թուականը: Սիւսականի բանիբուն հեղինակն՝ կարգելով, յէջ 20, Սիւնեաց եպիսկոպոսներու ժամանակագրական ցանկը, հանդերձ իրենց եպիսկոպոսութիւնը վարած ժամանակամիջոցով, Անանիայի կու տայ 42 տարիներ, և յամին 458 կը դնէ նորա յաջորդը Նոռն, և ասոր այլ՝ 8 տարի վերջ Գաղաղը<sup>1</sup>, ինչպէս Գաղաղայ զՄոռչեղ, 17 տարի վերջ: Յաջորդութեան կարգը Ստ. Օրպէլեանի քով իսկ նոյն է, բայց վերջինս՝ անձինքը միայն կը յիշէ, առանց այս ինչ կամ այն սրոշ տարեթուին: Չինչ և իյէ, դիտնական Հօրս նշանակած հաշուին համաձայն՝ Անանիա յամին 457 կնքած կը համարուի իւր մահահացուն: Սակայն եթէ ստոյգ է Հ. Ալիշանի և Օրպէլեանի յիշեալ Նոռն և Գաղաղ անձնաւորութեանց գոյութիւնը՝ Սիւնեաց եպիսկոպոսութեան աթոռին վրայ, ապա ուրեմն ինչպէս մեկնենք Սիւնեցի պատմագրիս մի ուրիշ յայտարարութիւնը<sup>2</sup>, ըստ որում 457 թուականէն

1. Գիտել կու տանք՝ որ այս երկու անունները Ստ. Օրպէլեան միայն կը յիշէ իբրև Սիւնեաց եպիսկոպոսներ, իսկ հին պատմագրաց ոչ միոյն քով յիշատակութիւն չկայ նոցա մասին. ուստի եթէ իրօք իսկ եղած լինին, չեմ կարծեր որ ժամանակագրական այն տարեթիւերու համաձայն իրարու յաջորդած ըլլան, ինչպէս որ նշանակած է Հ. Ալիշան՝ յիշեալ ցանկին մէջ. որովհետև այլ կերպով՝ այն տարիներն՝ որոնք, — ինչպէս զուգիւրք, — Անանիայի կը վերաբերին, դոցա կը փոխանցին:

2. Յորում կը ծանուցանէ միանգամայն, թէ Սրկղոնից եկեղեցւոյ շինութեան և օծման պատմութիւնը նոյն իսկ այն եկեղեցւոյ արձանագրութիւններէն հանած է: Գծբաղդաբար այդ հին արձանագրութիւններէն և ոչ մին մնացած է այժմ, որով ոչ միայն Սիւնեաց եպիսկոպոսաց, այլ նոյն իսկ նոցա ժամանակակից կաթողիկոսաց թուականներն ևս մինչև այսօր բնդունուած և գործածուած թուականներէն մեծապէս պիտի տարբերէին: Որչափ որ բաղդաւոր է Ստ. Օրպէլեան՝ Անանիայի և Գիւտի մասին իւր տուած տեղեկութեամբ, բայց մենք պէտք ենք խորհիլ, որ այդ արձանագրութիւնն՝ հայ թուականի հաստատուելէն յառաջ կատարուած լինելով, չկարէր սոնել որոշ տարեթիւ մի, և այս պատճառաւ իսկ պատմիչս բաւականացեր է եկեղեցւոյ շինութեան սասար կողմ չորս երկրանց անուանքն և Գիւտի կաթողիկոսութեան իններորդ տարին յիշել միայն, դորս միայն կրնանք իբրև որոշիչ բնդունել: Իսկ Աթաշխոսդայի ձեռքով Հայոց նահատակութիւնը՝ Անդովկայ ժամանակ կատար-

Ժ

շատ տարիներ վերջը դեռ կ'ապրի և կը գործէ Անանիա . և նորա ժամանակ կատարուած նշանաւոր դէպքերէն իբրև վերջինը՝ կը յիշուի Վարդանանց պատերազմէն տարիներ վերջ Սիւնեաց Վայոց-ձորում՝ պարսիկ Աքաշխոռքայի ձեռքով բազմաթիւ Հայոց նահատակուելն և Գիւտի կաթողիկոսութեան իններորդ տարին այն տեղ հոյակապ կաթողիկէի մի հիմնարկութիւնն և Անանիայի ներկայութեամբ աշխարհախումբ հանդիսիւ օծուելն: Արդ, այս դէպքս Հ. Ալիշան յամին 473 հաշուելով՝<sup>1</sup> կը դժուարի ընդունել որ Անանիա մինչև այդ ժամանակ ապրած լինի . իսկ եկեղեցւոյ հիմնարկութեան և օծման ընդմէջ՝ եթէ 2-3 տարի ևս դնենք, որ խիստ բնական է, կ'ունենանք մանուսանդ 474-476 թուականը: Սակայն ըստ մեզ՝ մինչև

բուած մի հնագոյն դէպք եղած կ'երևի (տես Մ. Կաղանկատուացի, հտ. Բ. գլ. Ա.), զոր Օրպէլեան՝ Գիւտի կաթողիկոսութեան ժամանակ կատարուած եկեղեցւոյ շինութեան և անոնց նշխարաց փոխադրութեան դէպքին հետ շփոթեր է:

1. Այս հաշիւս ըստ իմիք ստույգ կ'երևի, շիտելով որ Ղազար (Իր. Գ. գլ. ԿԲ) Պերոզի գահակալութիւնն և անոր հրամանով կապեալ նախարարաց արձակուելն պատմելէն վերջը, առաջին անգամ կը սկսի յիշատակել Գիւտի կաթողիկոսութիւնը: Այս շատ բանաւոր է, վասն զի Յազկերտի ժամանակ Հայք ամենայն իրօք նուաճուած լինելով, դրժուար է որ կարենային ըստ քմաց կաթողիկոս ընտրել, թող թէ արքայից արքայի պաշտօնական հրամանովն. հետեաբար այսպիսի ոչ պաշտօնական ընտրութիւն մի, գէթ Հայոց կողմէն, Պերոզի թագաւորութեան ժամանակ միայն կարելի էր, որուն գահակալութեան վեցերորդ տարին դարձան կապեալ նախարարք ի Հայս: Ըստ Նիուրէկէի՝ Պերոզի գահակալութիւնն եղած է յամին 457-459, Յուլիսի 30, որով և նորա վեցերորդ տարին կը համեմատի 463-465 թուականին: Ուստի, ըստ այսմ Գիւտի կաթողիկոսական ընտրութիւնն եթէ 457-459ին եղած համարինք, և Վայոց-ձորի եկեղեցւոյ հիմնարկութիւնն այլ անոր Զրդ տարին, ինչպէս կ'աւանդէ Օրպէլեան, այն ժամանակ կ'ունենանք 466-468 թուականը. իսկ եթէ 463-465ին, կ'ունենանք, - նոյն հաշուով, - 472-474 տարիթիւերը հիշդ:

Բայց Պերոզի առ Գիւտ կաթողիկոս յղած պատգամէն, զոր պահած է մեզ Ղ. Փարպեցի (Իր. Գ. գլ. ԿԳ) կ'իմանանք, թէ կաթողիկոսի ընտրութիւնն առաջ արքայից արքայի հաճութեան եղած է ստուղի, զի կ'ըսուի. « Մինչև ցայժմ քո իշխամութիւնդ առանց իմ հրամանի կալիս է. և ծառայ մարդիկ եմ՝ որոց քեզ գայլապիսի մեծ գործ տուեալ է »: Այս ընտրութիւնս Յովսէփայ մահուանէն անմիջապէս յետոյ չի կրնար եղած լինել, այլ շատ տարիներ վերջ, ինչպէս պիտի տեսնենք առ Ղազարայ:

այս տեղ դժուարութեան ամենևին տեղի չկայ, վասն զի ըստ այսմ Անանիա 90 տարեկան եղած կը լինէր և ոչ աւելի, որ եզական բան չէ: Բայց եկուր տես, որ պատմութիւնն՝ այդ թուականէն դեռ շատ աւելի կ'երկընցնէ Քիւտի կաթողիկոսական տեղութեան հետ՝ նոյնպէս և Անանիայի կենաց տարիները: Ղազար՝ Յովսեփէն, այսինքն է՝ 452էն վերջ Մովսէս և Մելեոս<sup>1</sup> ևս կը յիշէ իբրև միջանկեալ կաթողիկոսներ, որուն կը համաձայնի և Թովմաս Արծրունի: Ըստ այսմ Սամ. Անեցին այլ 470ին կը դնէ Քիւտի կաթողիկոսընարութիւնը, որով նորա 9րդ տարին այլ զոր կը հաստատէ Օրպէլեան, կը հանդիպի յամին 479: Բայ աստի՛ պէտք էնք ի նկատի առնուլ նաեւ հետեւեալ պարագաներն. այսինքն է՝ եթէ ոչ Սա. Օրպէլեանէն յիշուած Վայոց-ձորի Հայոց կոտորածն, այլ գէթ քրիստոնէական Հայաստանի աւերմունքն և ընդհանուր եկեղեցեաց շինութիւնքն Պերոզի թագաւորութեան ոչ թէ առաջին 6 տարիներուն մէջ, երբ բարեկամական էին երկուստեք յարաբերութիւններն, այլ 15-20 տարիներում կարող էին լինել, երբ սաստկացան հալածանք և պատերազմունք Պարսից, անօրէն ուրացողայն Արվայրի, Գաղիչոյի և Վահանայ Սիւնեցւոյ գրգռութեամբ. միով բանիւ, երբ կաթողիկոսը դիմեց առ Լեոն կայսր, և Վահան Մամիկոնեան այլ կը խորհէր ապստամբիլ: Այս այնքան աւելի պատմական է, որքան որ Սերէոս<sup>2</sup> և Ղազար իրարու համաձայն կ'աւանդեն: Իսկ որով հետեւ Պերոզի 15-20 տարիները կը համապատասխանեն 474-479 թուականին, ապա ուրեմն ինչպէս Վայոց-ձորում Սրկիդոնք գիւղի կաթողիկէի օծումն, այսպէս այլ Սիւնեաց եպիսկոպոս Անանիայի մահն՝ այս ժամանակամիջոցիս հանդիպած է. վասն զի այս դէպքէս վերջ այլ ևս չի յիշուիր նա ի պատմութեան:

Այժմ տեսնենք թէ այսքան տարիներով պատարուն կենաց մէջ՝ ինչ գործեր կատարեց Անանիա, յօգուտ իւր ազգին և աշխարհին: Նախ և առաջ պէտք է ասել, թէ Անանիայի եպիսկոպոսութիւնն ինքնին մասնաւոր դարագլուխ մի կը կազմէ

1. Թովմ. Արծրունի, Պատմ. սոց. կ. Պուլտոյ 1852, էջ 81, տարբեր ձևով կը դրէ մի և նոյն անունը, այն է՝ Միդէս, թերևս ուղեւով զանազանել Ղազարէն յիշուած այս կաթողիկոսը՝ Սիւնեաց եպիսկոպոսէն:

2. Պատմ. սոց. կ. Պուլտոյ, 1851, Գլուխ. Գ. գլ. Ա. էջ 45. « Եւ եղև յամս Պերոզի արքայի Պարսից՝ բարձունն ամենայն իշխանութեանց և կարգաց և օրինաց քրիստոնէութեան. և այնպիսի վտանգ նեղութեան հալածանաց և քամահանաց ի վերայ հասեալ իշխանաց », և այլն:

## ԺԲ

Սիւնեաց եկեղեցական պատմութեան մէջ, վասն զի այդու վերսկսաւ նոցա բարձրապատիւ եպիսկոպոսութիւնն, որ Անդովկայ օրերէն սկսեալ ընդհատուած էր, մատնելով այդ մեծատարած նահանգը՝ որս մոգական կրօնից աղիտաբեր ոանձգութիւններուն, որով նախնի քրիստոնէութիւնն ապականեցաւ, ըստ ասից Մ. Խորենացւոյ<sup>1</sup>, հեթանոսական աղանդներով, և իշխանք և գուեհիք գունդագունդ կը դիմէին դէպ ի Չրուանականութիւն, Այս վերանորոգութիւնս կատարուեցաւ, Ստ. Օրպէլեանի ըսածին համաձայն, Ս. Սահակայ Պարթևի ձեռքով, երբ, այն է՝ զինի գիւտի գրոց և թարգմանութեան՝ կը շրջէր նախ ի Հայս Յունաց բաժնին, և ապա ի Աիւնիս, և եկեղեցական կարգերը կը հաստատէր, մեծին Ներսիսի ծրագրով: Այս բանս շատ լաւ կը համաձայնի արդէն վերև նշանակած 418 թուականին. բայց պատմագրիս իւր աթոռի պատուասիրութեամբն անմիջապէս յաւելցնելը, թէ այդ ժամանակէն իրաւունք արուեցաւ Սիւնեաց եպիսկոպոսին «նստել ի գահ Մետրապօլիտոսքեան և կոչիլ նախաթու Հայոց պատրիարքին», այլովքն հանդերձ, դժ մեծապէս ինդրոյ նիւթ է և յոյժ կասկածելի: Եւ յիրուելի նախ որ Ե դարու պատմագրաց քով չկայ բնաւ յիշատակութիւն այսպիսի մի եղելութեան. հետևաբար, Օրպէլեանի այդ վկայութիւնն՝ ոչ թէ այս դարուս վաւերական յիշատակարանաց վերայ հաստատուած է, այլ Զ-Ղ դարու, երբ առաջին անգամ ծագեցաւ ի Հայս դաւանաբանականին հետ՝ նաև եկեղեցական նուիրապետութեան պայքարն Յունաց հետ: Այս բանս այնքան յայտնի է Մ. կազանկատուացւոյ, Ասողկայ և նոյն իսկ Ստ. Օրպէլեանի քով պահուած Մաքենոցաց հռչակաւոր վանահօր Սողոմոնի վաւերական մէկ յիշատակարանովն<sup>2</sup>, որով և ոչ իսկ երկբայութեան տեղի կը մնայ, թող թէ վիճաբանութեան:

1. Պատմ. Հայոց Գ. գլ. ԽԷ:

2. Ուր Ը դարու բազմահմուտ վանահայրն յետ յիշելոյն Յուստինիանոս կայսեր ժամանակ, այն է՝ Զ դարում (այլք Թէոփոսի ժամանակ կը դնեն), պատրիարքական աթոռին իջեոտէն ի Ա. Պոլիս փոխադրուելու միջադէպը, կ'ըսէ. «Յայնժամ շարժեցան ամենայն մեծամիտքն և իշխեցողք, և ուր Առաքեալ էր վախճանեալ՝ գամենեցուն աթոռ ինքնազուրի արարին և պատրիարք խոստովանեցին: Անդանօր և մերոցս բերաւ բան ի բերան. . . իւր սակս ինն դասակարգութեան՝ գլխաւորք եկեղեցականք անձնահաս մտօք. . . կարգեցին զԱբրահամ՝ Պատրիարք, և Աղուանիցն՝ արքեպիսկոպոս, և Վրացն՝ Մետրապօլիտ»:

Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, այս ժամանակ իսկ Մետրապօլիտու-

Սակայն այս պատմական ճշմարտութեանս հանդէպ՝ կարելի է ընդունել և այն, թէ այն օրէն ի վեր երբ Վասակ Սիւնեցին Հայաստանի Մարզպանոչքեանս պատիւն ստացաւ յարքայէն կամ նոյն իսկ իւր ազգէն, Սիւնեաց քաղաքական գահերիցութեան համաձայն՝ եպիսկոպոսական իշխանութիւնն իսկ սկսած ըլլայ տեսակ մի պատուաւոր գահերիցութիւն ունենալ, ոչ միայն Գողթնեաց եպիսկոպոսին՝<sup>1</sup> վրայ, այլ նոյն իսկ միւս վիճակաւոր եպիսկոպոսաց մէջ: Ղազար Փարպեցւոյ մեզ աւանդած Վաղարշապատու ժողովական եպիսկոպոսաց ցանկին մէջ կը տեսնենք, որ Սիւնեաց եպիսկոպոսն Անանիա՝ առաջին բարձին վրայ բազմած է, զկնի կաթողիկոսական տեղապահին Յովսէփայ: Այս՝ բաւական կռուան մի պիտի համարուէր ստուգիւ նոյնպէս Օրպէլեանի վերը մէջ բերած ենթադրութեանն, այնու մանաւանդ՝ որ առ Ղաղարայ նախարարաց ցանկին մէջ ևս եպիսկոպոսականին նման, նախ Սիւնեաց իշխանն ունի առաջին տեղին, և ապա Արծրունեաց և Մամիկոնեանց իշխանները կարգաւ: Բայց դիտելով որ մէկ կողմէն նոյն իսկ այդ ցանկերու մէջ մնացեալ իշխանաց կարգը՝ վիճակաւոր եպիսկոպոսաց կարգին համեմատ չի զուգընթանար, և միւս կողմէն այլ Եղիշէի ըն-

թիւնը՝ Սիւնեաց դեռ տրուած չէ, այլ Վրաց մետրապօլիտին՝ Աիւրիոնի- և այն իսկ Ազուանից արքեպիսկոպոսին՝ Հայոցմէ բաժնուելէն վերջ, զորս պատմելէն վերջ նոյն Սողոմոն, կը յարէ. « Ապա Հայք վասն մեծաբանութեան Յունաց, որ փոքրկացուցանել ջանային զկայս հանգստեան Թագէտսի՝ չունել եպիսկոպոսապետ և մետրապօլիտ, խորհեցան առնել մետրապօլիտ զՄարզպետականն եպիսկոպոս, տալով նմա իսաչ և պատիւ միայն . . . : Ապա Սիւնեաց ետուծ զսլաւութիւն լինել Մետրապօլիտ Հայոց, խաւանիչ մեծարամօք»:

1. Մ. Խորենացի՝ (Պատմ. Գ. դւ. Կ) Մուշէ անուամբ Գողթնեաց եպիսկոպոս մի կը յիշէ, որուն յանձնելով Ս. Մետրոպ նորադարձ ազանդաւորաց վարդապետելու և հրահանգելու հոգը, ինքն կ'անցնի ի Վիրս: Այս եկեղեցական էթէ նոյն համարինք Սիւնեաց եպիսկոպոսական ցանկին մէջ (տես Սիւսական էջ 20) յիշուած Մուշէին հետ, որ յամին 483 կը յաջորդէ Գաղաղայ, կարելի բան չէ որ և՛ դարս սկիզբն Անանիայի հետ միամամանակ եպիսկոպոս եղած լինի. վասն զի ի Սիւնիս 12 գաւառաց մի միայն եպիսկոպոս կ'իշխէր, իսկ միւսները քորեպիսկոպոսներ էին ախողոտով, առանց ձեռնադրութեան: Ուրեմն կամ Խորենացւոյն յիշած եպիսկոպոսն ևս՝ քորեպիսկոպոս հասկանալի է, և կամ Մովսէս իւր պատմութիւնը գրած մամանակին վերաբերելով է անշուշտ, որ եպիսկոպոս կը կոչէ զնա. որով կը տեսնուի միանգամայն, թէ Խորենացի 483 թուականէն դեռ տարիներ վերջը գրած է Հայոց պատմութիւնը:

## ԺԴ

ծայած ցանկին մէջ ընդհակառակն Սիւնեաց յիշեալ եպիսկոպոսն կարգաւ Ժրդ է, ուստի չենք կրնար հաստատել, որ Ղազար պաշտօնական Գառազանագրքի մի համաձայն առաջին տեղին տուած ըլլայ Անանիայի, քան թէ դիպուածով. և սակայն պատահական յիշատակութիւնս իսկ անշուշտ բաւական պատրուակ մ'եղած է Ստ. Սրպէլեանի՝ յիշեալ թիւը ենթադրութեանն յանգելու:

Բազմամեայ ընդհատումէն վերջ սասանձեւելով Անանիա եպիսկոպոսական ծանր պաշտօնը՝ Սիւնիքի պէն բազմագաւառ, պարսկաբարոյ և խիզախ ժողովուրդ մի հովուելու, որոնք թէպէտև ի լուր երկնառաք քարոզութեան երկրորդ լուսաւորչացն Սահակայ և Մեսրոպայ՝ երկրորդ անգամ կու գային խոնարհեցնել իրենց ըմբոստ պարանոցը աւետարանական քաղցր լծոյն ներքև, յափշտակուած հայասառ հայրենախօս գրոց գիւտի վարդապետութեամբ, բայց միշտ հակամէտ էին դիւրաւ թօթափել զայն, մեծ ճիգն հարկաւոր էր: Այս, Մեսրոպէն յետոյ Անանիա եղաւ Սիւնեաց մեծ նորոգիչն: Թէպէտ և պատմութեան մէջ բաց ի մի քանի համառօտ ակնարկութենէ՝ ուրիշ մասնաւոր նկարագիր մի չունինք, թէ ինչ էին և ինչպիսի՞ այդ բարենորոգութիւնքն, սակայն կորեան՝ ընդհանուր Հայաստանի մասին ըրած նկարագիրն՝ կարելի է առնուլ իբրև ճշգրիտ նկարագիր Սիւնեաց նահանգում կատարուած բարեփոխութեանց: Սիւնեաց պատմութենէն իսկ յայտնի կը տեսնուի, թէ Անանիա՝ ինչպէս եպիսկոպոսանալէն յառաջ իբրև թարգմանիչ և ուսուցիչ՝ գիտութեան և հաւատոց կրկնաջանեան լոյսը տարածեց իւր լեռնական աշխարհի խորոց և բարձանց մէջ, այսպէս այլ յետ այնորիկ ջանաց կենօք և մահուամբ պահպանել իւր իշխանութեան ընդարձակ սահմանները, որպէս զի վերստին չիյնան նախկին մոլորութեան և խաւարի մէջ: Թէպէտև Ուրացեալ Վասակայ և նմանեաց փառամոլ ձկտումներն՝ կը քարշէին միշտ ազգաբնակութիւնը դէպ ի Տիգրոն, դէպ ի Արաշխուշրայ (կրակապաշտութիւն), սակայն Անանիայի պէս հսկող հովուի կրակոտ քարոզներու շանթիքը՝ կը հարուածէին զանոնք ուժգին, և անոնց հետամուտ ժողովուրդն յետս կը կասեցնէին: Այս, ով լաւ ուսումնասիրած է զՂազար և զՍերէոս, ով ճանչցած է Պերողի բունութեան ներքև ճնշուած ժողովրդեան և եկեղեցւոյ ահաւոր կայութիւնը, աննկուն Անանիայի և Գիւտի արդիւնք համարելու է ամբողջ Սիւնիքի ոչ պարսկացումը, մինչև որ ելան նորահրաշ յաղթանակաւ վեհն Վահան և Մանգակունի:

Անանիայի գործունէութիւնը չամփոփուեցաւ միայն ի Սիւնիա . յամին 418-420 կը գտնենք զնա յԱղուանս , որ իբրև նոր ուն սփեւտէս և հռետոր՝ իր Բենիամին ճարտարարուեստ աշակերտակցին հետ , զոր տարաւ մանուկն Վասակայ յանձնարարութեամբ , կը մասնակցի Ս . Մեսրոպայ՝ անոնց գրոց գիւտին և լուսաւորութեան մեծ գործին մէջ : Կորիւն , Խորենացի և Օրսէլէան լուած են դժբաղդաբար Անանիայի այս մասին իսպառնակ դերը . սակայն մենք կարող ենք ըսել , թէ Հայոց Կադմոսն՝ ինչպէս հայ տառերն հնարած ժամանակ , Հռուփանոս ճարտարին ձեռաց և ձևակերպութեանցը պէտք ունեցաւ , և հայերէն աթուածները կամ հնչումներն՝ ըստ կարգման սիւղորայիցն Յունաց հանդիպցնելու համար՝ Ս . Սահակայ , Յուհանի , Յովսէփայ և այլոց , այսպէս այլ Աղուանից տառերը ձևակերպելու համար՝ Բենիամին ճարտարին , և անոնց կենդանի բարբառներուն յարմարցնելու մասին Անանիայի պէտք ունեցաւ . վասն զի ինքն իբրև Տարօնեցի՝ անձեռնհաս էր ըմբռնել Աղուանից աղխաղուր և խժաղուր բարբառի՝<sup>1</sup> արտասանութիւնները , իսկ Անանիա իբրև դրացի՝ քաջ տեղեակ էր զանոնք ըմբռնելու և ի գրի առնելու : Յայտնի չէ մեզ թէ որչափ ժամանակ կեցաւ հոս Անանիա , և դեռ ի՞նչ գործեր տեսաւ . բայց հաւանական է կարծել , որ նա եկեղեցական գրուածներ ևս անոնց լեզուով թարգմանած ըլլայ , Բենիամինի հետ , և ուրիշ բարեկարգութիւններ իսկ ներմուծած : Այ՛ , անտարակոյս , այս և այսպիսի արդեանց համար է , որ Անանիա կրկին պատուով պատուեցաւ Աղուանից Արսվաղէն թագաւորէն , այն է թագաւորական դրօշակով և կարմիր ու սկիւտաուն վառիւ (« ունեւով գունդ սակի և ի վերայ խաչ պատուական ») , ըստ ասից Ստ . Օրսէլէանի<sup>2</sup> :

1 . Այս բարբառէս մեզ գրական հին յիշատակարան հասած չէ , բայց հայկականէն շատ տարբեր ըլլալու էր , որով հարկ եղաւ անոր նոր նշանագիրներ հնարել :

2 . Տես հտ . Ա . գ . ԺԳ , ուր սուրբ կը յաւելու , թէ ոչ միայն Անանիայի շնորհուեցաւ այդ պատիւն , այլ որպէս զի անոր յաջորդ Սիւնեաց եպիսկոպոսներ ևս կարենան գործածել պայնս : Այս տեղեկութիւններս հաղորդելէն վերջ , երկու աղբիւրներ վկայ կը կոչէ . այսինքն են՝ Մ . Խորենացի և Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց , զոր Քերթոզակօր Մովսիսին աշակերտ կ'անուանէ : Մովսիսի այժմու պատմութեան Գրոց ԾԳ գլխում կը յիշուի միայն Անանիայի երթն յԱղուանս , պարզեատրութեան մասին բնաւ խօսք չկայ . հետեւաբար , այսպէս էր նաև Օրսէլէանի ձեռքն եղած օրինակին մէջ , զի կը գրէ պատմիչս . « Ահա զայս

Յամին 446, երբ Արշակունեաց բանականիսան Շահապիվան՝ աշխարհախումբ ժողովի մի նորանշան թատր կը հանդիսանայր, ուր վիճակաւոր եպիսկոպոսաց և երիցանց հետ՝ իշխանք ևս կը համախմբուէին, Յովսէփ կաթողիկոսի և Վասակ մարզպանի նախադաշութեամբ, բարուց և վարուց ապականութեան առջև հասարակաց կանոնները հաստատելու, ներկայ էր ըստ վկայութեան Սիւնեաց պատմագրին, նաև Անանիա, թէպէտև յիշեալ կանոնաց ներածութեան մէջ սորա անունն յիշուած չէ: Սիւնեցին՝ եթէ ուրիշ աղբիւր մ'ևս ունեցած է իւր

ցուցանէ մեզ սուղ ինչ Մովսէս Քերթողահայրն» : Իսկ մնացածն Պետրոսի Սիւնեցոյ մէկ յիշատակարանէն առնուած է, ինչպէս կը յայտարարէ Օրպէլեան՝ անմիջապէս, «Եւ զբովանդակն ճշգրիտ՝ աշակերտ նորին Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց» : Եթէ ստուգիւ ունեցեր է Օրպէլեան Պետրոսի այն պատմական գրուածներէն մին, որոնք առ թագաւորն Աղուանից Վաչական ուղղուած կ'աւանդուին, յորում ինքզինքը աշակերտ կ'անուանէր Մ. Քերթողահօր, դա մի զօրեղ փաստ է, թէ արգարև Քերթողահայրն Մովսէս՝ նոյն է Պատմչին հետ, և թէ նորա պատմութիւնն ևս ՚ի դարու վերջ կամ ի սկիզբն Չին գրուած էր: Մ. կաղանկատուացի (Պատմ. Աղ. հտ. Բ. 41. Գ) Անանիայի յիշեալ դէպքը բառ առ բառ Խորենացոյ խօսքերով կ'աւանդէ, առանց յիշելու զՊետրոս Սիւնեցին, որ կասկածել կու տայ նորա գրուածին վրայ. սակայն Օրպէլեան որովհետև ի ՉԽԳ թուին Հայոց՝ արևելեան եպիսկոպոսաց կողմէն առ Գրիգոր կաթողիկոս ուղղած պաշտօնական թղթին մէջ ևս Մ. Քերթողահօր աշակերտ կ'անուանէ դարձեալ զՊետրոս Սիւնեցին, ուստի շատ հաւանական է կարծել, որ նա Սիւնեաց Վարդապետարանի կամ եպիսկոպոսական դիւանին մէջ դասած ըլլայ այն յիշատակարանը, որ անծանօթ մնացած էր կաղանկատուացոյն:

1. Շահապիվանի ժողովի կանոնաց ներածութեան մէջ՝ հակառակ վերի թուականին՝ կ'ըսուի, թէ տեղի ունեցաւ ժողովս՝ Պարսից Յազկերտ Բի 16րդ տարին. իսկ արդ, ըստ դահեկանաց՝ Յազկերտ գահակալած է յամին 458, օգոստոս կ. ուստի ըստ այսմ յիշեալ ժողովն հանդիպած կը լինի 455-456ին: Բայց դիտելով որ այդ ժողովն Վարդանանց պատերազմէն վերջը չի կրնար եղած լինել, վասն զի ներածութեանս մէջ յիշուած են նաև Վարդան և Աւսնդ Երէց. որեւն կը հետևի, թէ այս յիշատակարանս գաղափարողաց ձեռքով խանդարուած է. հետևաբար, կամ փոխանակ ժԳԻՂ կարդալու է, որով կ'ունենանք ճիշդ 446 թուականը, և կամ Վարդանայ և Աւսնդի անուններն՝ իբրև եկամուտ՝ վերցրնելու է: Մեզ առաջինն աւելի հիմնաւոր կ'երևի:

2. Այս կանոնները՝ Ասողկայ և Վարդանայ հետ՝ ուրիշ յիշատարանք իսկ Տուգամաց կամ Ռոն կ'անուանեն, անշուշտ այն պատճառաւ, որ այդ տեղ արգիլուած յանցանաց համեմատ՝ յանցաւորք միշտ նիւթակամ տուժի կամ զբամ հատուցանելու ևս կը պարտաւորուէին:

գիմաց, յոյժ կարևոր ըլլալու էր այն. բայց առանց յիշատակութեան թողուլն իսկ, մանաւանդ թէ Անանիայի պարզ յիշատակութեամբ միայն անցնելն՝ կասկածելի կ'ընէ մեզ զայն: Յամենայն դէպս, գիտելով մէկ կողմէն որ յիշեալ ներածութեան մէջ ուրիշ եպիսկոպոսունք ևս յիշուած չեն, և միւս կողմէն այլ որ Սիւնիք ամէն նահանգներէն աւելի պարսկամոլ անբարոյականութեանց մատնուած էր, ուրեմն, հարկաւորապէս Անանիա առաջինն ըլլալու էր հոն ընթացողներէն և գործակցողներէն:

Ասկէց չորս տարի ետքը, այն է՝ յամին 430, երբ ազգն և եկեղեցին բարեփոխուած և կազդուրուած նախընթաց ժողովի փրկաւէս կանոններով, միւս սնգամ կը գումարուէին ի Վաղարշապատ՝ իրենց նախահարց արիւնով գնուած ամենէն աւելի անգին, ամենէն աւելի նուիրական ժառանգութիւնը՝ սուրբ հաւասքը պաշտպանելու, հոն կը ներկայացնեն դարձեալ ՂԱնանիա՝ Եղիշէ և Ղազար. և վերջին պատմիչս՝ ինչպէս տեսանք՝ առաջին տեղին տուած է Սիւնեաց եպիսկոպոսին ի մէջ այնքան ժողովական Հարց, որոնք ըստ մեծի մասին Սահակայ և Մեսրոպայ աշակերտներ և գործակիցներ էին: Արդ, այսպիսի մի առաջնութեան ուրիշ պատճառ մեզ յայտնի չէ, բայց ի անոր եպիսկոպոսական երիցութենէն: Բայց յիշատակի արժանաւոր բանն, զոր այլք ի լուութեան թողած են և միայն Սա. Օրպէլեան կ'աւանդէ, է այն աներկիւղ և խրոխտապանծ պատասխանին, որով իբրև երկնասաստ շանթիւ խորտակեցաւ Յազկերտի գուռղութիւնը, զոր Անանիա և Ղևոնդ Նրէց ի միասին խորհած և խմբագրած են, կ'ըսուի, Յովսէփայ կողմէն: Մենք մինչև ցայսօր Եզնկայ կամ Եղիշէի գրչի արդիւնք կը համարէինք զայն, որոց անուանքն նոյնպէս արձանագրուած են ի թիւս ժողովականաց: Արդ, եթէ Օրպէլեանի խօսքն բացառութեամբ միայն այդ երկու եկեղեցականաց համար ըսուած համարինք, զորս յանուանէ կը յիշէ, այն ժամանակ կարելի է աւել, թէ Անանիա գիտութեամբ և գրչով իսկ շօրեղ և նշանաւոր մէկն եղած է իր ժամանակին:

Այս նամակէն վերջը մի ուրիշ ասպարիզի մէջ ևս, իբրև անպարտելի դիւցազն աւետարանի, կանգուն կը ներկայացնէ մեզ պատմութիւնը զԱնանիա. այսինքն է՝ « ի հասանել նեղութեանն ի Յազկերտէ ի վերայ քահանայից և իշխանաց » և նոնց հետ է Անանիա. և ինչ որ գրով վարդապետեց՝ պատրաստ է գործով և մահուամբ իսկ պաշտպանել: Զարմանալի է, որ Սա. Օրպէլեան (հտ. Ա. գլ. ԺԶ) այս դէպքս Շահապիլանի ժո-

## ԺԸ

ղովէն վերջ կը գնէ, անմիջապէս յարելով. « Որ յետոյ գնաց ի Ժողովն Շահապիվանի », որով կարծել կու տայ, թէ դա 430-432ին կատարուած դէպքը չէ, այլ ասկէց տարիներ յառաջ և գուցէ Սահակայ Ժամանակ եղած մի ուրիշ հալածանք: Հակահառակ դէպքում, Սիւնեաց պատմագրի այս տեղով կարծէք թէ կը հաստատուի Շահապիվանի Ժողովն յամին 434 գնող յիշատակարանի ստուգութիւնն: Ո՞ր գիտէ թէ նոյն իսկ Քերթողաձօր Մովսիսի երեմիաբար ողբացածն ևս՝ Շահապիվանի Ժողովում այդ թուականին ներկայացուած Հայաստանը չէ: Սա. Ասողիկ (Պատմ. Բ. գլ. Ա. էջ 77) Ս. Սահակայ՝ Վռամայ հրամանաւ կաթողիկոսութենէն անկանելուն և Աբղիշոյի և Սուրմակայ անոր յաջորդելուն պատեհաւ՝ գրուած կը համարի Խորենացոյ Ողբը. սակայն սորա մէջ մանրամասն նկարագրուած պարագաներն, բայց ի մասնաւորի «գրգուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն» իրօքերն 430էն շատ և շատ տարիներվերջ եկած սղէտները կը ներկայացնեն մեզ:

Կենսագրական այս տեղեկութիւններս ըստ բաւականի որոշ գաղափար մի տուին մեզ՝ Անանիայի իբրև գործունեայ և մեծ մարդու մասին. այժմ կը հարցուի բնականապէս, թէ ի՞նչ գործէջ նա արդեօք և՛ իբր գրագէտ: Սիւնեաց պատմիչն՝ ոչ միայն աշակերտ Սեսրոպայ, այլ և քարգնանիչ տիտղոսով կը յիշէ զԱնանիա: Գիտելով որ այդ տիտղոսը մեր դասական հեղինակներէն անոնց միայն արուած է, որոնք թարգմանաբար և ինքնագիր երկասիրութիւններով ծանօթ էին<sup>1</sup>, կրնայ ըսուիլ որ Անանիա ևս այլևայլ գրական գործեր արտագրած ըլլայ երբեմն՝ կրկին տեսակէ, որոց առաջինները զո՛հ եղած են անշուշտ համոյնածախ Ժամանակին. իսկ վերջիններն այլ՝ անստուգութեան քողի տակ ծածկուած մնացեր՝ այն հարիւրաւոր թարգմանութեանց հետ, որոց թարգմանողներն փոյթ չէին տանիր, Ժամանակին եսերելի սովորութեան համաձայն, իրենց անուանքը գրոշմել ի վերայ: Անանիայի գործակցութեամբ եղած թարգմանութիւնքը՝ նորա ինքնագիր գրչի և գրուածոց ձեռքով միայն կարելի էր որոշել. սակայն ասով իսկ բազմը գրչնեայ գտնուած է առ Անանիա: Թէև ունիմք արդ Անանիա մա-

1. Որինակ իմն, Գր. Նարեկացի, Ներսէս Շնորհալի և Լամբրոնացի իսկ այդ պատճառաւ թարգմանիչք յորջորջուած են յազգէս, և թարգմանչաց հետ տօնուած, թէպէտև զարեբու մեծ իտրոցով հետի կ'ապրէին անոնցմէ: Արկրորդ, թարգմանիչ՝ զրել իսկ կը նշանակէ հին հայերէնի մէջ:

կապրութեամբ մի քանի գրուածներ, զորս յիշած է Հ. Գ. Չարբհանալեան իւր Հայոց գալրութեան պատմութեան գործին մէջ, բայց որովհետեւ Է-ԺԱ, դար իսկ բազմաթիւ Անանիաներ եղած են՝ և բաւական գրիչ և հռչակ ունեցող, հետեւաբար այդ գրուածներն իսկ կարող էին փոփոխակի երբեմն այս և երբեմն այն Անանիայի արուել, ինչպէս իրօք այլ արուած են՝:

1. Օրինակի աղադաւ, ի խնդրոյ Գրիգորի միայնակեցի մի գրուած՝ Յաղագս զղջմամ և արտասուաց ճառն, զոր Հ. Յ. Տաշեան (տես Ցուցակ. Ձեռ. էջ 1057) Անանիա Շիրակացւոյն գործոց մէջ դասած է, իրօք մի ուրիշ Անանիայի, այն է Նարեկայ վանահօրն է. վասն զի ինչ ինչ տարբերութեամբ նոյն դասնք 1898ի Պատկերի (թիւ 8, 9, 10, 11, 12, 13) մէջ հրատարակուածին հետ. և Էջմիածնի թիւ 914 Ճառքնարի մէջ իսկ իրօք Ան. Նարեկացւոյ անունը կը կրէ: Մեր մատենադարանի թիւ 57 գրչագրին (Ա. Ոսկեփ.) մէջ, Ամամիա վարդապետի ասացեալ խրատ հոգեշահի ի վերայ արհամարհելոյ զաշխարհ. «Արդ եթէ կամիս» . այսպէս մի ուրիշ գրչագրի՝ Ամամիայի վարդապետի՝ ասացեալ վասն անցաւոր աշխարհիս, խորագրուած երկու ճառերն՝ թէպէտ և արտաքսապէս տարբեր կ'երևին, սակայն ըստ իսկութեան յարասութիւնք են Նարեկացւոյ յիշեալ ճառին, ինչ ինչ յաւելուածով և յազաւումներով, որք կատարուած են տգէտ գրչի մի ձեռքով՝ լի սխալագրութեամբք: Նարեկացւոյն է, ըստ իս, նաև մեր թիւ 1108, այն է ԻԶ Ոսկեփորիկի մէջ, Ամամիայի հայոց վարդապետի ասացեալ՝ խրատ քահանայից. «Արդ քահանայական աստիճան» մակագրուածն. զի ճառիս լեզուն և ոճն նոյն է Յաղագս զղջման, և այլն, ճառի լեզուին և ոճերու հետ, նա մանաւանդ երկուքին մէջ ևս որ դերանունը ստէպ գործածուած է զի, որպէս զի շողկապնիրու նշանակութեամբ: Այսպէս նաև խօսք և խրատք յաւիտեմակամք, որ տանի ի կեանս յաւիտեմակամս. «Քանզի գրեալ է և պատուիրեալ» . - խորհուրդ կատարմամ Առաքելոյն Պետրոսի. «Իսկ երանելին Պետրոս», - և ի խաչելութիւն Պետրոսի, որ կը սկսի. «Իսկ Պետրոս երկրորդ» բառերով՝ նոյնպէս Անանիայի մակագրուած են, բայց հաւանօրէն Շիրակացւոյն են և օտար բնագրէ թարգմանաբար յերիւրուած: Ներընդհան ի սուրբ կաթողիկէ եկեղեցի՝ Հ. Տաշեան՝ Ան. Նարեկացւոյ գործոց մէջ նշանակած է. բայց կիրակոս պատմիչն (տպ. ի Վիեննայի 1865, էջ 64) Սանահնեցւոյն կուտայ որոշակի: Յիրաւի, այս ճառիս ճոխ և ճոռով լեզուն թէ՛ Ան. Նարեկացւոյ և թէ՛ Սանահնեցւոյն մեզ ծանօթ գրուածոց լեզուէն և ոճէն բոլորովին կը տարբերի: Իս Գր. Նարեկացւոյն աւելի պիտի տայի զայն, եթէ «Անանիայ Փիլիսոփայի» մակագրուած չլինէր որոշակի. վասն զի անոր ազգեցութեան բնագրոջմը կը կրէ իւր վրայ. հետեւաբար, Գրիգորէն վերջ սպրող և գրող Ան. Սանահնեցւոյն աւելի վերագրելի է, քան թէ Նարեկացւոյն կամ Շիրակացւոյն, որոնք յառաջ լինելով քան զԳրիգոր, անոր ազգեցութենէն իսկ ազատ էին: Վասն խոմարհութեամբ ճառք՝ Հ.

Ի

Գարձեալ, ինչպէս է գարուն՝ Սէբէոս, այսպէս այլ թի գարուն եղած են Սարգիս Շնորհալի և ուրիշներ, որոնք Ս գարուն լեզուի նմանողութեամբ գրուածներ շարագրած են, որով նոր գժուարութիւն մ'ևս կ'աւելնայ՝ հինը նորէն զանազանելումասին: Սակայն ինչպէս արծաթը միշտ արծաթ է թէև ոսկեզօծուի, այսպէս այլ մէկէն աւելի առանձնայատկութիւններ կան, որովք արծաթի գարուն գրուած մի կը զանազանի ոսկեգարեանէն: Արդ, քննադատութեան փորձաքարէն անցընելով բոլոր վերոյիշեալ գրուածները՝ մին միայն և այն իսկ վերապահութեամբ՝ ոսկեղէն գարուն և գրչի ծնունդ կրնայ համարուիլ, և հետևաբար արժանաւոր Անանիա Թարգմանչին, որ կը կրէ հետևեալ խորագիրը. « Երանելոյն Անանիայի Հայոց վարդապետի՝ Ի Խորհուրդ Յովնանոս մարգարեի . Յաղագս Յովնանու՝ հակիրճ և համառօտ բանիւ անցյուք »: Այո՛, այս ճառս թէ լեզուի համեմատաբար յստակ հայկաբանութեամբն և կորովով, և թէ գաղափարաց բարձրութեամբն և պայծառութեամբ՝ անհամեմատ կերպով միւսները կը գերազանցէ, և ունի երիցագոյն Թարգմանչաց յատկութիւնները:

Մեր Տօնապատճառներէն միոյն մէջ, անանուն որ Յովնանու յիշատակին առթիւ այս ճառս համառօտելով՝ Անանիայի անունը « երանելի » տիտղոսով զուգած է՝ Սկեբերանի և Եփրեմի անուանց հետ, իբրև ընդհանուր մակագրութիւն, թէ-

Տաշեան՝ Ան. Սանահնեցոյն ընծայած է, իւր յիշեալ գործին մէջ. բայց մեր թիւ 57 գրչագրին մէջ՝ Ան. Շիրակացոյ մակագրուած է: Ըստ իս ոչ միոյն և ոչ այլ միւսին արժանաւոր գրուած մ'է. այլ կամ Տիրուայ Հօր Անանիային ըլլալու է և կամ Սևաստացոյն: Ան. Սանահնեցոյն են Սակս ամիտիր հաղորդելոյ, - վասն միծի հիմզաղաթիմ, - վասն ապակամացու ասողսն զմարմիմ Տեսում, - առ մերքիմացիալսն, - վասն պատկերապաշտաման, - վասն ժողովոյն Քաղկեդոնի, - վասն բաժանման վրաց, - վասն չորից ակոռոցն, - վասն միւռոնիմ, - վասն բաղարջիմ, - վասն տօնի Ծմնդեան Քրիստոսի, - և Պատմաւոր հրից սրբատացութեան, զոր հայք ի դէմս Որդոյ ասեմ, 11 ճառերն, որք կը գտնուին մեր թիւ 50 հին և ընտիր՝ ձեռագրին մէջ, Խոսրովկայ և Յովհ. Սարկաւագ վարդապետի ճառերուն հետ, առանց տարակուսի Անանիա Սանահնեցոյն են, թէպէտև անոնց գաղափարոյն Յովհ. Կղնկացի՝ պարզապէս Անանիա կը դրէ, առանց Սանահնեցի վերագրին: Անանիա Շիրակացոյ գործերն արդէն ծանօթ են Ք. Պատկանեանի և այլոց հրատարակութեամբ (տես Հ. Տաշեանի Յուլիանի մէջ, յէջ 10 57): Այս ծանօթութիւնս դիտմամբ դրինք, միանգամ ընդ միշտ շիտմութիւնները վերցնելու համար:

պէսև խմբագրութիւնն ընդհանրապէս Անանիայի յիշեալ ճառէն քաղուած է: Անշուշտ խմբագրողն այսպէս վարուելով՝ ուզած է ցոյց տալ, թէ այդ երեք վարդապետներու ճառերէն քաղած է զայն. սակայն մենք կարող ենք ասկէ մի ուրիշ փաստ ևս յառաջ բերել. այսինքն թէ, հայազգի վարդապետս՝ իւր հնութեան և ժամանակաւ անոնց մերձաւոր լինելուն պատճառաւ է, որ երանելի տիազոսով յարգուած և միւս Հարց հետ զուգարար յիշուած է: Եւ յիրաւի, միւս Անանիաներէն ո՛չ միոյն այդ տիազոսը տրուած է ժամանակակիցներէն:

Մեր ժէ Ճառընտիրն, որ ընդօրինակուած է Պարխուտ ազգային գրատան թիւ 45 հին ձեռագրէն, կ'ընծայէ մեզ մի այլ գեղեցիկ ճառ՝ հեռուեալ մակագրով. « Յաղագս Յովնաննոս Մկրտչի, Անանիայի վարդապետի ասացեալ. Ի ձեռն տուեալ զիմաստս՝ Հոգւոյն ձեռնառութեամբ »: Այս ճառս իսկ՝ իւր յատակ շարաքանութեամբն և խորիմաստ վարդապետութեամբք՝ Յովնանու մարգարէին վրայ գրուածէն ետքը՝ ընարեւազոյնն է, ըստ իս, բոլոր նախայիշեալ գրուածներէն, այնպէս որ ես չկարենալով միւս Անանիաներէն միոյն յատուկ համարել, կ'ախորժիմ վերապահութեամբ Սիւնեցի թարգմանչին վերագրել և զայս: Եւ ստուգիւ, բայ ի ոճէն՝ վարդապետական տեսակէտով իսկ շատ նմանութիւններ ունի այս ճառս՝ առաջնոյն հետ. և ինչպէս առաջնոյն հեղինակին՝ այսպէս և ասոր սիրելի և ընտելական է Փիլոն երրայեցին, ուսկից կոչում մ'ևս կ'ընէ, բանին վրայ խօսած ժամանակ: Յօդուածս չի ներեր երկարօրէն խօսել այս ճառի մասին. բայց այսչափ միայն դիտել կու տամ, որ թէպէտև արտաքսապէս ներբողեանի երևոյթ ունի, բայց ծայրէ ծայր կարդալով զայն, դուք կը նկատէք, որ դա մասն ըլլայ Յովհաննու կամ Մարկոսի աւետարանի Ազլխու Մեկնոչքեան մի: Իսկ թէ կարծեցեալ մեկնութիւնն արգեօք Անանիա՞ ինքնին երկասիրած է, թէ յայլմէ թարգմանած. այս գժուար է որոշել, քանի որ աւետարանացս մեկնութեան հայերէն հին թարգմանութիւնք ձեռքերնիս հասած չեն: Յամենայն դէպս, անհաւանական չէ, որ Անանիա կամ մեկնիչ եղած ըլլայ յիշեալ աւետարաններէն միոյն և կամ թարգմանիչ անոր մեկնութեանն, եթէ ստուգուի ճառիս հարադատութիւնը:

Գալով դարձեալ մեր առաջին նիւթին, այն է՝ ի Խորհուրդ Յովնաննոս մարգարէի խորագրուած ճառին, որ աւելի մտաւ մեր այս յօդուածին, կ'ըսենք որ բոլորովին կը տարբերի Ա. Նփրեմի՝ կարծուած Յաղագս Յովնաննոս և Նիկոչեացոց խորագրուած ճառէն, և Փիլոն երրայեցւոյ Յաղագս Յովնաննոս

Ճառին հետ աւելի կը բաղդատուի: Աքանջելի է Նփրեմ՝ իւր բանաստեղծական նկարագրութեանց մէջ, որոնք պէտք է ըսել, թերևս չափազանց և անբնական իսկ կ'երևին ինձ, ինչպէս Փիլոնն այլ սքանչելի է իսրայելեան սպգին և անոր նախահինամոզ Աստուծոյ մասին ըրած այլաբանական վեհ տեսութիւններովն. իսկ Անանիա՝ կրնանք ըսել, թէ հին և նոր օրինաց խորհրդաւոր վարդապետութեանց պարունակութեամբ՝ երկուքէն իսկ ընտրելադոյն է, օգտակարաւոյն, և իր տեսակին մէջ գերազանց: Հայագգի վարդապետս՝ երկու մասի բաժնած է այդ համառօտ՝ բայց ամենահիւթեղ ճառը: Առաջնոյն մէջ, - յետ հակիրճ ներածութեան մի՛ յորում՝ պարզուած է մարգարէին՝ առ Նիւնուէացիս աւաքելութեան խորին խորհուրդն, - կը նկարագրէ Յովնանու՝ կիտոսի փորին մէջ իբրև ի թագաւորական կառս բազմէն և ծովու թագաւորութեան մէջ շրջինն, անոր աչքերով՝ անդնդոց և խաւարի բոլոր գաղանկքը տեսնէն և բերանովն ի խորոց առ Բարձրեալն աղ-թելն, նկատելով յայսմ՝ ամենայնի զՅովնան իբր օրինակ Ադամայ և պատժական օրինաց ներքև: Իսկ երկրորդ մասին մէջ՝ կը նկարագրէ զփախստական մարգարէն իբրև օրինակ Յիսուսի Քրիստոսի, կամ անոր փրկութիւնագործ օրինաց և անօրէնութեանց հետ, հանդերձ զուգակշռութեամբ ծածկեալ խորհրդոց: Այս ամենայն՝ բարգաւաճած է նա ամենաբնական, խիստ վսեմ՝ և անսովոր գրչով, ուստի կրնանք դատել իրաւամբ, թէ նա՝ Ս. Իրոց և արտաբնոց դիտութեամբ ներկուռ մէկն էր, և ունէր ամենաբարձր գաղափարներն անգամ՝ սղագունիւք բացատրելու դիւրաթեք և կորովի լեզու մի:

Չնայելով որ այս ճառս իւր ներքին ծրագրովն և ուղղութեամբ՝ Փիլոնի յիշեալ ճառէն բոլորովին անկախ և ինքնուրոյն գործ է, սակայն և այնպէս բաղդատելով իրարու հետ՝ գտնուեցան այլևայլ նման տեղեր: Այնու աւելի ուշագրաւ են այս տեղերէն շատերը, զի ամբողջութենէ աւելի՝ բառերու, բացատրութեանց և գաղափարի նոյնութիւն ցոյց կու տան. յորոց կրնանք հեռեցնել, թէ գոքս՝ Անանիայի կողմէն եղած նիւթական և նարատակաւոր փոխառութիւններ չեն, այլ ընտելական և մի ուրիշ գործողութեան բնական արգասիք. այսինքն, թէ եղած լինելով նա թարգմանող Փիլոնի գրոց<sup>1</sup>, և

1. Որուն հայերէն թարգմանութիւնը թէպէտև ընդունուած է իբրև գործ ի գարու, բայց յայսմ գործածուած մեր դասական բարբառը՝ մեծապէս կը տարբերի նոյն գարու Տարօնեցի և Այրարատոցի գրողներու

յեաոյ յօրինելով իւր այդ ճառը՝ բնականապէս Փիլոնի գաղափարներու հետ՝ անոր թարգմանութեան մէջ նախապէս գործածած իւր բառերն և բացատրութիւնքն իսկ՝ իբրև ընդելական մի բան՝ վերստին յեղյեղած է աստ և անդ : Ստուգիւ, այսպիսի մի եղելութեան, - այսինքն՝ թարգմանական և ինքնագիր գրուածոց նմանաբանութեանց, - յայտնի օրինակներ տուած են մեզ նոյն իսկ Խորենացի, Աորիւն և ուրիշներ իսկ, ուստի երկբայելու պատճառ չկայ :

Արդ, մեկնաբանական տեսակէտերով՝ իսկ յոյժ հետաքրքրական այս ճառիս ամբողջական հրատարակութիւնը պիտի ներկայացնենք այս և յաջորդ թերթին մէջ. այժմ կը բաւականանանք հոս միայն մի քանի համեմատութեանց ձեռքով՝ մեր ըսածն ապացուցանել :

բարբառէն : Մենք չենք կարող առ այժմ հաստատել, թէ դա Սիւնեաց գաւառաբարբառն ըլլայ, քանի որ չունինք որոշ տեղեկութիւն այն գաւառն մէջ այդ նահանգում խօսուած գաւառաբարբառի մասին. բայց այս յայտնի է, թէ այդպիսի զանազանութիւններ կային և կը տեսնուին իսկ մեր դասական մատենագրաց քով : Այս մասին մասնաւոր ուսումնասիրութիւններ եղած չեն մինչև ցայսօր, բայց Մ. Ազաւանկատուացոյ, Պետրոս և Մովսէս Սիւնեցիներու գործածած լեզուներն՝ ունին միւս գաւառացի գրուածներէն բաւականաչափ տարբերութիւններ, և ասոր կը նպաստեն :

1. Օրինակ իմն, ուզելով մեր ճառախօսն յարացոյց բերել Քրիստոսի գոհին՝ Ղևտական գրոց ԺԶ. 9-10 մէկ տեղին, կը գրէ. « Զնոյն և Մովսէս նկարագրեաց յերկուս նոխազան վիճակեալս, մին՝ Տեառն, և մի՝ Ազայիլի, այսինքն՝ բարկութեամ Ստուծոյ. որ և Տեառն ելանէր վիճակ՝ սպանեալ լինէր, իսկ Ազայիլիմ՝ ազատեալ. կտպեալ ի մա որդամ կարմիր, և արձակէին յանկոխ անապատ. և անդ կերակրէր զերամութիւն երկրիմ զամմ ողջոյմ, ամվմասս պահելով ի զազամաց. և ի կատարիլ ամիմ զառմայր ամդրէմ ի ըամակմ՝ սպիտակացեալ և լուսակիզմ սոռաւք մաքրեալ, և կարմրութիւն որդամմ ի մոյմ սպիտակութիւն փոխարկեալ, որպէս ասէ Կսայի. Եթէ իցեն միզք ձեր », և այլն : Կօտրագրուած տողերն այնպիսի նորութիւններ են, որոց Կօթանասնից թարգմանութեան մէջ հետքն անգամ չկայ. և չեմ կարծեր որ Կսայեացեն վերջը բերուած օրինակին կանխազեկոյց մեկնութիւն մ'ըլլայ. զի ՚ոս Ազայիլ բնաւ յիշուած չէ : Ուստի կամ Որոգինեայ աստեղանիշ վեցիշեան օրինակի մի տարբերութիւն ըլլալու է այդ, և կամ մի այլ անծանօթ աղբերէ :

« Եւ իջեալ ի խորշ մի նաւին՝ ի խոր քուն թանձրու թեան ննջէր, իաւարազգած խորհրդովք պարապնդեալ ի մահիճս... և հագապ շնչոյն ի տրտմոռքեկեկ բանձրացեալ շնչր զանցս շնչերակացն, և ընդ նրբագոյն փողոցս երկուց ծծոցն ձնչելով՝ յարտափչելն սոռչէր, յանդիմանեալ ի խղճե մտացն »:

« Այլ մասնուցեալ նաւասաիքն զարթոնցանեկն զնա... տեսեալ Յովնան զկոռտակոռնն աշեացն, և զաստիկ բոռք ձմերայնոյն՝ պատեալ ահագին ձայրմամբ, ընթանեալ անփախչելի՝ զմարգարէն փախոնցեալ »:

« Եւ տեսեալ նաշաստեացն զխառվոռքիւն ծովոռն, ոչ ըսասովորութեան յուզեալ հողմոցն սասակութեան, և իմացեալ թէ վասն մեղացն յոռգին աշիք ծովոռն, սկսան հարցարկնոռքիւն առնել ի մեզ իշրեանց: Գրան առ մարգարէն, ընկել թէ ոռստի, կամ յո՞ երբայ. և իմացեալ զարարտամ

Էջ 583. « Քանզի մինչդեռ ի քուն ոմն էր, յայտնափ խառվութեան զգայ. քանզի ոսոխ էր ուրնգացն ձայն խորդման՝ յորժամ խորագոյն գրացելոյն շինի. քանզի փակեցելոյ կարծեմ բերանոյն, և այլոց զգայոռքեանցն արգելելոց՝ ի ձեռն արկանցն շոռնչն գնալով նեղի. և նեղեալ նոյնպէս նեղ և նոռքր փողոցն յորժամ շցցի շնչով՝ սոռչէ: Արդ՝ փողոցն այսպէս այս սիրելի է. իսկ մարգարէն ոչ իբրու ի բնութեանէն բոնագատեալ խորդայր, որչափ թէ ի դատաստանեկն՝ յանդիմանոռքիւն մեղոռցելոյն կոչեցեալ »:

« Եւ զարթոնցեալ մարգարէն, և ի վերայ նաւին ողին ելեալ, ետես զամպ ձմերայնոյն, և զաշեացն կոռտակոռքիւնն, զհողմոցն զբանոռքիւնն. զկակտնուճն մարդկանն, զլաւիւն մանկանոցն. սակաւ միջոցաւ ամենեցուն ոգիքն ի մահ արգելեալ փակեալ կային... »:

Էջ 584. « Իսկ նաշին առաջնորդք զաղօքս ի մեղացն արգելեալս տեսանեկն... և զխառվել ծովոռն. ի խոյզ իշրարանչիշր գործոցն դիմեկին, և զայլան պահանջելով զհամարս պարտեացն՝ կենացն փոխեն, և եկեալ առ մարգարէն՝ զվարոռցն յանդիման գրկնոռքիւն. դոռ ո՞, առեկն, և ոռստի՝ առ մեզ եկիր... Եւ

քոչքիան մարգարեիև, կարգեցին  
ատեան: Նաւն՝ էր իբրև զբեմ  
դատաւորաց. ծովն՝ իբրև սոսի՝  
հնչմամբ ալեացն դատախազ լի-  
նէր, յայտնեալ զյանցանս մար-  
դարէին. հողմունքն՝ իբրև զդա-  
հիճս պատրաստէին ի սպա-  
նունս » :

« Իսկ նառախարքն ոչ իբրև  
զանմարդիս՝ յանբոյրս (°) հա-  
տանեին զվճիռ մահոռն, այլ  
իբրև մարդասերս՝ բազում քրե-  
նոչքեանք և վիճակաւ յայտ-  
նեին զյանցանս մարգարեիև » :

« Չոր ասեալ կիտոսին՝ եղ-  
ի բանդի յորովայնի իւրում,  
իբրև յանրմբանելի մետաղս...  
Արդ, իջեալ Յովնան ի պորտ  
ձկանն իբրև պղնձի պարսպօք  
չոչրջ փակեալ կարծրագոյն կո-  
ղիւք վիշապին, և ձեղոռն յար-  
կին՝ քան զերկաթ կարծրագոյն  
ի վերայ հաստատեալ... : Արդ  
ասեալ կիտոսին զՅովնան շրջե-  
ցուցանէր ընդ ամենայն խորշս  
անդնոց, իբրև կառք եղեալ  
բագաւորի, զի ցուցցէ և ան-  
զհրաշալի գործս Աստուծոյ. և  
ամենայն կետք և կայտաւք՝ որ  
ի խորշս ծովուն տեղեօք սահ-  
մանեալ՝ ընդ առաջ ելեալ Յով-  
նանու իբրև Թագաւորի, և  
ուղարկէին ի միւս խորշ » :

նաւազացն ի քննութենէ յու-  
զի խնդիր, և ի խնդրոյն դտանի  
վիճակ, և վիճակէն մասնի կա-  
պեալ՝ որ ի մարդ կանէն անգի-  
տանայր » :

« Իսկ մեք (ասեն նաւավարքն)  
ոչ իբրև սպանոռն, ո՛վ մարդ,  
և ոչ իբրև ունակ որք վայրե-  
նիք եւ ընոչքեանք՝ խողխո-  
ղոռն մարդոյ տեսանել ծա-  
րաշի եմք, այլ այսր որ շուրջ  
փակեալ պահէ զմեզ չարս, կա-  
միւնք զատանել : Արդ զի՞նչ  
մտայ. վիճակաւ արանց բարե-  
պաշտաց՝ Աստուծո՞ դատաւոր  
լինի... » :

« Եւ մինչդեռ զօղէր մարդա-  
րէն, ձգեաց յինքն իբրոչ զչոռն  
կիտոսն. քանդի ես իբրև ի ձե-  
ղուանացելոյ իմն որովայնէ՝  
պղնձի իմն ձեղոռնաւք և եր-  
կաթի որմովք ըմբռնեալ ծած-  
կիմ և զամենայն աշխարհ գի-  
տեմ, ոչ շարժելով... և քեոցն  
շարժոռն՝ իբրև կառք իմն բա-  
գաւորի : Ես տեսի զանդնոցն  
գոռնջ դուզեաքեայ աջօք՝, զայն՝  
որ ի միջոցի արմատացեալ էին  
յայիսն վեմքն... զկայտիս ծո-  
վայնոցն, զզանազանութիւնս  
կենդանեացն ձեոց » :

« Եւ մարգարէն՝ իբրև ընդ քանք ապակշոյ՝ ընդ աչս կիտոսիև տեսանէր զվեժարեծս Աստուծոյ »:

« Եւ ապա օժեալ անցուցաւ նէր վեժն կիտոսս զմարգարէն յակն ծովոռն, որ յանդնդոց հոսէր սաստկոռքեանք ի վեր՝ եռալով, յորոյ վերայ անցեալ նստէր. և գնդակօքն հերձեալ՝ զչափաշորն քողոյր ի վեր, զի ընկեալ յորձանացն անչափոռքեան՝ ծածկեացէ զերկիր... »:

« Այլ և նոյն գագանն գործակից շիւնէր մարգարէին պահառք և աղառքիւք. զի զայն երիտաւուրս ոչինչ ճաշակէր, և պատրաստէր զլեզունն՝ փոխ տալ մարգարէին յաղառքելն. զի քան մարգարէին իբրև կտնդայ (ոց) քախէր զլեզոռ կիտոսիև և իբրև զքնար հնչեցոռցանէր զազի ալէսս սղբոյն առ Աստուած... և մարգարէանայ ըզվերաքերելն իւր ի խորոց անդընդոց, և ի միջոյ ժանեացն ի վեր կորզիլ՝ աստուածային անյաղք զաշոռքեանքն »:

« Եւ կիտոսիև աչօք իբրև օտար իւնն և նորոգ տեսի զաշխարհ... »:

« Եւ զիմարդ ոռնչ ծովոռն ի ներքոյ կայր անդնդոցն տատանելոյ զաեզի... և ղևիաքանայ ընդդիմ կացոռցեալ զիւր մարմինն յորձանին, և գնդակօքն զհերձմանն ծածկէր զտեղիս, զօրէն յաղքողի աներկիւշ ըսգնեալ. այնչափ ի վեր ըրդիւել թոյլ տոռեալ յորձանին, որչափ զիւրին էր նմա մարմնոյն լինել... և շոռք հոսելոյ զերկրաւ՝ ոչ ծովացոյց զցամաք »:

« Արդ, վասն զի մարգարէն՝ ձեռով ի կիտոսիև պահեցեալ շիւնէր, և գործով յաջոյն Աստուծոյ պահպանեցեալ շիւնէր, աղօթս ի կիտոսիև առնէ... և զքեքան գագանին յաղօթս ի վարասնոռ: Եւ էր տեսանել սքանչելի նորագործ բարեխօս եզեալ յաղառս փրկուածեան մարգարէին՝ և կիտոսն զքերանն երաց յելս աղօթակերոռքեան, և զլեզունն փոխ տոռեալ ի քանից քարքառս, զօրէն գործոյ երաժշտականի յարոռւտագիտէն նոռագ մատիև ի մարգարէին քախեցեալ<sup>1</sup> »:

1. Փիլոնի այս ճառէն վերջ մի ուրիշ ճատուած ևս կայ Վենետկոյ հրատարակութեան մէջ՝ իբրև յաւելուած՝ որ առնուած է միայլ ձեռագրէ: Այս ճատուածիս մէջ կան երկու երեք տեղեր, որոնք բառ առ բառ

## ԵՐԱՆԵԼԻՈՅՆ

# ԱՆԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ \*

**Յ**ԱՂԱԳՍ Յովնանու՝ հակիրճ և համառաւտ բանիւ անցցուք, բացայայտելով զծածկեալ խորհուրդն որ ի նմա, թէ վասն որոյ պատճառի առաքեցաւ նա՝ ի մէջ հեթանոսաց, որ ոչ իսկ էր սովորութիւն մարգարէիցն այս, բայց միայն Յովնանու հրամայեցաւ քարոզել՝ Նինուէի՝ դառնալ ի շարեաց առ Աստուած:

Արդ, զայս է իմանալ պատճառ քարոզութեանն. յոր-

նման են Անանիայի ճառի տեղեաց հետ: Գուցէ ասկէ հետեցնեն ոմանք, որ հայ թարգմանչիս ընծայուած այդ ճառն իսկ իրեն հարազատ գործ չլինի, այլ Փիլոնի: Սակայն իմ կարծիքով ընդհակառակն յիշեալ հատուածին Անանիայի ճառէն արտագրուած լինելն աւելի հաւանական է. վասն զի անոր մէջ պարունակուած բաներն՝ տարբեր շարաբանութեամբ կը գրանուին արդէն Փիլոնի ընդարձակ ճառին մէջ, որով պակասաւոր լինելու կասկած չի տար:

\* Այս ճառս կը գտնուի նաև յամին 1269 գրուած մեր ամենամեծ ճառընարին մէջ (թիւ 463) գրեթէ նման խորագրի ներքեւ. Անանիայի վարդապետի՝ ասացեալ ի խորհուրդ Յովնանու մարգարէի: Իսկ ստորին լուսանցներու վերայ մի և նոյն գրիչը փոքր բոլորգրով նշանակած է մի անգամ « Յովնանու Ամաթեայ », մի անգամ « Ի Յովնան վերլուծութիւն », երկիցս « Ի Յովնան՝ Անանիայ վարդապետի Նարեկացւոյ », և մի ուրիշ տեղ « Յովնանու »: Այս երևոյթս ցոյց կու տայ մեզ, թէ հնագոյն բնագրի մէջ բառս՝ Նարեկացոյ՝ չկար, ինչպէս խորագրէն կը տեսնուի, և թէ ԺԳ գարում անգամ այդ ճառի մասին տարակոյս կար. հետեալսոր, մեր գրիչն այլ՝ ըստ կամս իրեն ծանօթ Անանիայի Նարեկացւոյ ծանօթագրած է զայն, բայց ճառիս լեզուն շատ կը տարբերի Անանիայ Նարեկացւոյ լեզուէն: Գրչագրիս տարբերութիւնքը կը դնենք ի ստորեւ նըշանակելով ԺԳՃ մենատառիւք:

1. ԺԳՃ. քարոզ շինել ի Նինուէ:

ժամ յանդիմանէին մարգարէքն զորդիսն Իսրայելի, և ոչ կարէին դարձուցանել<sup>1</sup> ի հնազանդութիւն աւրինացն, սկըսանէին դարձեալ վասն գերութեան նոցա մարգարէանալ, զի թերևս ի բռնութենէ տառապանացն, սովոյ և սրոյ և գերութեան՝ կակղասցին ի<sup>2</sup> խստութիւն սրտից նոցա, և դարձցին ի շարեացն: Եւ նոցա տեղեկացեալ՝ թէ վասն մեղաց գերին յայրագգեացն, և յռեալ ի մարգարէիցն՝ թէ վասն<sup>\*</sup> մեղաց մատնին ի ձեռն այլագգեացն, առ որս հակառակութեամբ ընդդէմ մարգարէիցն ասէին, եթէ վասն մեղաց գերիմք, որք գերենն զմեզ՝ և<sup>3</sup> շարագոյնք են և լի կախարդութեամբ. զնոսա արժան էր սատակել, եթէ վասն մեղաց դասի Աստուած: Առ այս՝ դարձեալ՝ ասէին մարգարէքն, թէ զձեզ ընտրեաց Աստուած յամենայն ազգաց՝ բազում նշանօք և զօրութեամբ, զոր արար ի միջի ձերում, և ձեզ հաւատաց<sup>4</sup> տալ զօրէնս իւր և զդատաստանս իրաւանց<sup>5</sup>. վասն որոյ և ի ձէնջ պահանջէ զվրէժս ամենայն շարեաց: Եւ զայս Երեմիաս յայտ առնէ ասելովն, թէ Եգիպտոս զամենայն իմաստութիւն և ետ Յակոբայ ծառայի իւրոյ: Եւ Դաւիթ ասէ. Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայելի. ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր՝ ո՛չ պահանջէ ի անցանէ: Իսկ զի հերանոսաց այսպէս ինչ ո՛չ պարգևեցի, վասն որոյ ոչ պահանջեմ ի անցանէ<sup>\*\*</sup>, որպէս տարագրելոց ի խնամոց իմոց. զի թէ այսպիսի ինչ գործեալ էր իմ առ նոսա, առաւել ևս հնազանդէին օրինաց իմոց՝ առանց ստուենգանելոյ: Եւ թերևս անհաւատ լիցի<sup>6</sup> այս յաչս ձեր. այսօր արդեամբք ցուցից զկատարեալ հնազանդութիւն հեթանոսաց, զի յանդիմանեացի<sup>7</sup> շարութիւն ապստամբութեան ձերոյ:

Ասէ ցՅովնան, եթէ<sup>8</sup> քարոզեա Նինուէի մեծի քաղաքի, որ լի է փարթամութեամբ, և յղիացեալ փափկոռքեանք<sup>9</sup>, և զառածեալ շարեօք. և բաւական է մի քաղաքն՝ յօրինակ<sup>10</sup> դարձի ամենայն հեթանոսաց: Եւ քարսզեաց՝ ո՛չ բարութիւնս ինչ տալ նոցա, կամ երկիրս պարգևաց՝ որպէս Եբրայեցւոցն, որք իրրև կաշառանօք<sup>11</sup> ի պատճառս երկրա-

- |                         |                          |
|-------------------------|--------------------------|
| 1. հաշտեցնոցանել զնոսա: | (անուշադրութեամբ զրչին): |
| 2. ԺԳՁ. խստոռքիւնք:     | 6. բռնի:                 |
| 3. և.ս:                 | 7. յայտնեացի (չէ ուղիղ): |
| * չունի:                | 8. Ե՛րբ:                 |
| 4. Աստուած:             | 9. ԺԳՁ. կը պակասին:      |
| 5. իւր:                 | 10. գօրինակ:             |
| ** ԺԳՁ. չունի այս տողս՝ | 11. կաշառօք:             |

ւոր փափկութեան զուր պաշտեն զիս . այլ կործանումն միայն քարոզեա, և զայն՝ առանց նշանաց<sup>1</sup>, բանիւ միայն, զի յայտ լիցի դիւրադարձ բարք հեթանոսաց : Իսկ Յովնան՝ հրատարէր<sup>2</sup>, զի ո՛չ կամէր տալ պիղծ հեթանոսաց՝ զսուրբ մարգարէութիւն որդւոցն Արրահամու, որպէս և Տէր մեր՝ ոչ կամէր զհաց մանկանց՝ արկանել շանց : Եւ այլ ազգ ևս . զի հայեցաւ նա յարուեստ մարգարէութեանն իւրոյ, և իմացաւ՝ թէ ոչ կատարի բանք նորա՝ վասն դարձի նոցա, և ստեալ խոտի մարգարէութիւն նորա ի մէջ Խորայելի . զի զայն ետ նշան Մովսէս վասն սուտ մարգարէիցն, թէ յորժամ մարգարէութիւնն զկատարումն ո՛չ առցէ, գիտասլիք՝ թէ<sup>3</sup> մոլորեցուցիչք են, մի ընդունիցիք զայնպիսին<sup>4</sup> : Վասն այսորիկ ասեալ մարգարէին զմայր իշր՝ գնաց ի մէջ հերաւնոսաց, ասելով, թէ ստեցի մարգարէութեանն իւրոյ, և եղի խոտան ի մէջ Խորայելի<sup>\*</sup> :

Եւ արդ, թէպէտ և փախչել մարգարէին ընդդէմ էր հրամանացն Աստուծոյ, սակայն խորհուրդ մեծ նկարէր<sup>5</sup> ի նմա Աստուած, լինել օրինակ տէրունական տնօրէնութեանն . ի մահուն՝ անմահ, և յանապական թաղմանն<sup>6</sup> ի սիրտ երկրի՝ երկրորդն Ադամայ և Աստուծոյ շարչարեցելոյն վասն մեր : Եւ նոյն դարձեալ՝ առաջին Ադամայ ստունգանելոյն ի կենսատու պատուիրանացն Աստուծոյ : Եւ արդ, նախ բացայայտեսցուք զօրինակ համեմատութեանն առաջին մարդոյն, զի ի ձեռն ապացուցի փախստեան մարգարէիս՝ բացայայտեսցի ապստամբութիւն առաջին մարդոյն . և ապա եկեսցուք բացատրել և զօրինակ մեծի խորհրդոյ փրկչին մերոյ :

Եւ զի ստեղծուածն առաջին՝ ի պատիւ գերունակ աստուածատիպ յօրինեալ՝ ինքնիշխան ճոխութեամբ ձեմէր ի դրախտին փափկութեան, և ապա ցանկացեալ անհասից՝ պատրանօք բանսարկուին՝ ապստամբեաց, ստունգանելով ընդդէմ հրամանացն Աստուծոյ . կարծեաց գտանել տեղի արտաքոյ<sup>7</sup> իշխանութեանն, և զոր ունէր զազատութիւնն՝ կորոյս . և որում ցանկացաւն՝ ոչ եհաս ի կէտն, այլ ըմբռնեալ արտաքս դատողութիւն, (յ)անվրէպ մետաղս աքսորեալ, զի ծանիցէ զանհրատեշտ իշխանութիւն արարչին, ըստ այնմ<sup>8</sup> . Խրատեսցէ զքեզ ապստամբութիւն քո,

1. ՓԳՃ. նշանի :
2. ՓԳՃ. հրատարէր զերբայն :
3. զի :
4. զայնպիսին :
- \* Նօտրազրուած խօսքերն

- Մահ մարգարէից անվաւեր գրութենէն առնուած են :
5. նկարագրեր :
6. չունի :
7. արտաքոյ Աստուծոյ :
8. երի :

և եղիցին մայր իմաստութեան տանապանք չարչարանաց քոց: Եւ իջեալ յանդունդս խորոց՝<sup>1</sup> անդ ծանիցէ զանբաւ և զանճառ հրաշս արարչին, որոց ոչ գոյ թիւ. և ծանուցեալ զխնամս արարչին՝ իսկապէս հնազանդեալ խոստովանեսցի զգութ սիրոյ իւրոյ արարչին: Այսպէս և Յովնանու մարգարէի գիմակաց եղեալ հրամանի արարչին, հրաժարեաց ի պատուիրանէն. և կարծէր փախչել յանբաւանդակելի իշխանութենէն, յորմէ ըմբռնեալ՝ եղաւ յանդերձանելի մետաղս, զի ծանիցէ և անդ զաներևոյթ հրաշս արարչին: Չի որովք երևելի արարածովքս ո՛չ իմացաւ զանփախչելի իշխանութիւնն, խորովք անդնդոցն իմացի, թէ ընդ<sup>2</sup> ամենայն տեղիս է տէրութիւն նորա. զի յերկին և յերկրի, ի ծով և յամենայն խորս է տէրութիւն նորա, որպէս և ասաց Դաւիթ:

Եւ էջ Յովնան ի հաստատուն երկրէ՝ ի մէջ անհաստատ ջուրցն՝ ծփական ալեացն, որպէս Ադամ յանքոյթ, խաղաղական և սաղարթագուարն գրախտէն՝ յայս անհաստատ, և հոսանուտ անիծարբեր երկիրս, ի մէջ ծփանաց և ալեկոծութեան մեղաց, յորոց Դաւիթ մաղթէ ապրել ի խորոց ջրոց բազմաց, ի կաւոյ տղմէ, ի կարծող<sup>3</sup> մեղաց և ի գայթակղեցուցիչ:

Եւ իջեալ Յովնան ի մէջ ծովուն, և տարակուսեալ ի մէջ ծփական ալեկոծութեան խորհրդոցն՝ վարանէր, թէ յո՞ փախուցեալ գտցէ տեղի ապաստանի: Եւ յուզէին ալիք խորհրդոցն ծփանաց Յովնանու՝ ի տրամութենէ խղճի մտացն՝ առաւել քան ալիք ծովուն: Եւ իջեալ ի խորշ մի նաւին՝ ի խոր քուն թանձրութեան ննջէր, խաւարազգած խորհրդովք պարապնդեալ ի մահիճս, մերկացեալ ի լուսազգեաց մարգարէական հոգւոյն: Եւ հագագ շնչոյն ի տրամութենէն թանձրացեալ՝ ընոյր զանցս շնչերակացն. և ընդ նրբագոյն փողոցս երկուց ծծոցն ճնշելով յարտափչելն՝ սուլէր<sup>4</sup>, յանդիմանեալ ի խղճէ մտացն: Արպէս և Ադամ իջեալ ի գրախտէն յայս երկիր անիծից, մերկացեալ ի լուսազգեաց շնորհաց Հոգւոյն՝ խաւարազգած եղեալ<sup>5</sup>. զորոյ զդէմս առեալ մարգարէին՝ ասէ. Եղին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի ստուերս մահու. յիս հաստատեցաւ բարկութիւն քո,

1. ԺԳՁ. դժոխոց:

2. յամեկնայն:

3. ի շարժող և ի գայրակղեցուցիչ:

4. սողեր:

5. ի խղճի մտացն, դատա-

պարտեալ ի տրամուշտեկեկն, ընդունեալ իրբն. ի քունն քանձրուքիսն, խաւարազգեաց եղեալ: (Այս խօսքերս կըրկնուած են անուշադրութեամբ ընդօրինակողին):

և արհաւիրք խառնութեանց՝ շրջեցան զիևև իբրև զջոշր, և պաշարեցին զիս՝ իբրև<sup>1</sup> զաշխ ծովոս:

Արդ, մատուցեալ նաւաստիքն՝ զարթուցանեն զՅովնան, կարգալով<sup>2</sup> առ Տէր, յորմէ փախուցեալն էր: Տեսեալ Յովնան զկուտակումն ալեացն, և զսաստիկ բուք ձմերայնոյն՝ պատեալ ահագին ճայթմամբ, ըմբռնեալ անփախչելի՝ ըզմարգարէն փախուցեալ: Եւ տեսեալ նաւաստեացն զխոռվութիւն ծովուն՝ ո՛չ ըստ<sup>3</sup> սովորութեան յուզեալ հողմոյն սաստկութիւնն, և իմացեալ՝ թէ<sup>4</sup> վասն մեղաց յուզին ալիքն, սկսան հարցաքննութիւն առնել ի մէջ իւրեանց: Քան և առ մարգարէն, քննել՝ թէ ուստի<sup>5</sup>, և կամ յո՞ երթայ: Եւ իմացեալ զապստամբութիւն մարգարէին, կարգեցին ատեան: Նաւն՝ էր իբրև զբեմ դատաւորաց. ծովն՝ իբրև ոսոխ՝ հնչմամբ ալեօքն դատախազ լինէր, յայտնեալ<sup>6</sup> ըզյանցանս մարգարէին: Հողմունքն՝ իբրև զգահիճս՝ պատրաստէին ի սպանումն: Կիտոսն՝ իբրև զբանդ՝ բացեալ զդուռնն ընդունել զապստամբն: Իսկ նաւաւարքն՝ ո՛չ իբրև զանմարդիս՝ յամբոյրս հատանէին զվճիռ մահուն, այլ իբրև մարդասէրս՝ բազում քննութեամբ և վիճակաւ յայտնէին զյանցանս մարգարէին, մինչև ինքնին պարտեալ՝ խոստովան լինէր զմեղս իւր, և զվճիռ մահուն՝ անձամբ անձին հաստատէր. Առէք, ասէ<sup>6</sup>, ընկեցէք զիս ի ծովդ, և դարեացէ բարկութիւնդ՝ որ վասն իմ պատահեաց ձեզ:

Եւ առեալ թաղեցին ի մէջ ծովուն. զոր առեալ կիտոսին՝ եդ ի բանդի յորովայնի իւրում, իբրև յանըմբռնելի մետաղս: Արդ, ո՛չ արգել Աստուած զմարգարէն ի փախչելոյ անտի, զի մի՛ զազատութիւն անձնիշխան կամացն լուծցէ զառաջին ստեղծուածին՝ ի պատկեր իւր. այլ ետ փախչել, զի տուաւել ևս հրաշագործեացէ, նկարեալ ի նմա խորհուրդ բարձրագոյն՝ և աստուածային տնօրէնութեան: Սոյնպէս և յանցանացն Ադամայ կարգեցաւ ատեան դատաստանի՝ ի մէջ դրախտին, որպէս և ի նաւի անդ՝ Յովնանու. զի ձայն գնալոյ Տեառն Աստուծոյ՝ պաշարեաց զԱդամ, որպէս ձայն ալեացն՝ զՅովնան: Թղենին՝ իբրև զգատախազ՝ յանդիմանէր զԱդամայ մերկութիւնն. ծառն կենաց՝ իբրև զգահիճ պատրաստէր զնա ի մահ, վասն ճաշակմանն. վիճակ դատաստանին՝ եհատ վճիռ մահու:

Առաւ ընկեցաւ Ադամ, և թաղեցաւ յերկրի, որպէս Յովնան՝ ի ծովուն: Ա՛ռ եկուլ զնա մահ, որպէս զՅովնան լե-

1. ժԳՃ. որպէս:

2. կարդայ:

3. սովորութեամբ:

4. երե:

5. յայտնել:

6. չունի:

ւիաթան՝ թագաւոր որոց ի ջուրս, որպէս ասէ մարգարէն ի դիմաց Ադամայ, թէ Եկո՛ւլ զիս վիշապն ահագին, այսինքն՝ թագաւորութիւնն մահու:

Արդ, իջեալ Յովնան ի պորտ ձկանն, իբրև պղնձի պարսպօք՝<sup>1</sup> կարծրագոյն կողիւք վիշապին, և ձեղուն յարկին՝ քան զերկաթ կարծրագոյն ի վերայ հաստատեալ՝ պահէր ամբութեամբ զաւանդեալն նմա գանձ. զի յորժամ խնդրեսցէ աւանդողն, ամբողջ և անարատ կացուցցէ առաջի Տեառն իւրոյ. որպէս զԱդամ հարկանելով Աստուծոյ՝ աւանդեաց մահու, զի յորժամ խնդրեսցէ՝ ամբողջ և անարատ կացուցցէ առաջի Աստուծոյ ի յարութեան անդ:

Արդ, առեալ կիտոսին զՅովնան՝ շրջեցուցանէր ընդ ամենայն խորշս անդնդոց, իբրև կառք եղեալ թագաւորի, զի ցուցցէ և անդ զհրաշալի գործս Աստուծոյ. և ամենայն կէտք և կայտառք՝ որ ի խորշս ծովուն տեղեօք սահմանեալք, ընդ առաջ<sup>2</sup> ելեալ Յովնանու՝ իբրև թագաւորի՝ և յուղարկէին<sup>3</sup> ի միշս խորշն\*, որպէս ի քաղաքէ ի քաղաք. զի՝ զամենայն գործս Աստուծոյ՝ որ ի ծովուն ցուցցեն Յովնանու: Եւ մարգարէն՝ իբրև ընդ թանթ<sup>5</sup> ապակոյ՝ ընդ աչս կիտին տեսանէր զմեծամեծ գործս Աստուծոյ. և թուեցեալն պատիժ մարգարէին՝ լինէր ի պատիւ և ի փառս, առաւել քան ամենայն մարգարէիցն: Եւ ապա՝ ածեալ անցուցանէր մեծն կիտոս՝ զմարգարէն յակն ծովուն, որ յանդընդոց հոսէր սաստկութեամբ ի վեր՝ եռալով<sup>6</sup>, յորոյ վերայ անցեալ նստէր. և գնդակօքն հերձեալ՝ զչափաւորն թողոյր ի վեր, զի մի՛ ելեալ յորձանացն անչափութեանն՝ ծածկեսցէ զերկիր: ցուցանելով մարգարէին, թէ որպէս խնամակալու են անբան կենդանիքն աշխարհի, զի ի կերակրիլ միումն՝ ընկեր նորին փոխանորդէ<sup>7</sup> զտեղին. և այսպէս խնամ ունին աշխարհի՝ հրամանաւ արարչին: Եւ այսու<sup>8</sup> խրատէ զմարգարէն՝ խնամ տանել քաղաքին, որ կամէր զկորուստն նոցա: Այլ և նոյն գազանն գործակից լինէր մարգարէին՝ պահաւք և աղօթիւք. զի դայն երիս աւուրսն՝ ո՛չ ինչ ճաշակէր, և պատրաստէր զլեզուն փոխ տալ մարգարէին յաղօթելն. զի բան մարգարէին իբրև կրտսնդոց՝<sup>9</sup> բախէր զլեզու կիտոսին, և իբրև զքնար՝ հնչե-

1. ԹԳՃ. պարսպօք շորջ փակեալ:

2. ընդառաջեալ:

3. յղարկէին:

\* չունի:

4. և:

5. քաղաք:

6. եռացեալ:

7. փոխանորդեացի:

8. այսուչիկ:

9. զկտտոց: (Սխալագրութիւն է):

ցուցանէր զաղի աղէտս ողբոցն առ Աստուած. զի Ի խորոց անդնդոց, ասէ, եկեսցէ հասցէ ձայն աղաղակի իմոյ ի լսելիս քո, Տէր: Եւ խոստովանի զանհնարինսն՝ Աստուծոյ հնարաւոր գոլ: Ասէ. Եմուա գլուխ իմ ի փապարս լերանց. իջի՛ յերկիր, որոյ նիգֆ իւր՝ ախք յաւիտենից: Եւ մարգարէանայ զվերաբերելն իւր ի խորոց անդնդոց, և ի միջոյ ժանեաց ի վեր կորզիլ՝ աստուածային անյաղթ զօրութեամբն. ասէ, Ելցէ յապականութենէ կեանք իմ: Արդ, որպէս ետ թոյլ Յովնանու փախչել, զի հրաշագործեսցէ ի նմա զարուեստ իմաստութեան իւրոյ զօրութեանն, որպէս՝ ետ թոյլ Ադամայ՝ զնալ ըստ կամաց իւրոց, զի հրաշագործեսցէ ի նմա զիւր զօրութիւնն. զի որովք ո՛չ ծանեաւ անապական փառօքն և աստուածային իմաստութեամբն զարարիչն իւր, իջանելով յանդունդս դժոխոց՝ ծանիցէ և անդ զարարչին իւրոյ զօրութիւն. և ապա եկեալ արտաքս յապականութենէն, հնազանդեսցի իւրովք կամօք արարչին իւրոյ: Որպէս Յովնան ընկալաւ<sup>2</sup> զհրամանն՝ երթալ քարոզել զոր ո՛չն կամէր, իմացեալ<sup>3</sup> թէ շար (է ընդ) գիմանալ<sup>4</sup> արարչին և<sup>5</sup> կենսատու հրամանին. զի ետես խաւար անիմանալի, և իմացաւ՝ թէ երկնչին յարարչէն մոլորեցուցանել զՅովնան: Ասես<sup>6</sup> Ադամ խաւար անելանելի, զգրունս դժոխոց պղնձիս և զնիգս երկաթիս. և իմացեալ թէ ամենեքեան սարսեալ դողան յարարչէն, զի խնամք արարչին առ Ադամ ի դժոխս առաւել էր, քան ի դրախտին՝ պահելով զնա. որպէս պատիւ փառաց շնորհին՝<sup>7</sup> ի փոր կիտին առաւել էր խնամարկու քան ի ցամաքի: Եւ այնքան առաւել պատուեալ<sup>8</sup> պատուեցաւ Յովնան իջանելովն և վերատին գոլով պատժական կարծեօքն՝ քան ամենայն մարգարէքն, որքան նոքա բանիւ միայն՝ ընդ աղուա արտայայտեցին զթաղումն և զյարութիւն փրկչին. իսկ սա՛ն անձամբ նկարագրեաց զբոլոր փրկութիւն տիեզերաց, պատկեր ճշմարտութեան ստուերազրեալ ի նմա: Եւ այնքան պատուեցաւ Ադամ իջանելովն ի դժոխս, մինչ<sup>9</sup> հարկ լինել բանին Աստուծոյ ընդ նմա իջանել, և ընդ ինքեան վերաբերել ի փառս իւր, որպէս ասաց ցՅակոբ, թէ Ընդ քեզ իջայց յՆգիպտոս՝<sup>10</sup> ի ծառայութիւն ապականութեան, և ընդ քեզ ելից յանկոխ անապատ, տալ ի ժառանգու-

1. ԺԳՃ. սլշապես:

2. ընկալեալ հրաման:

3. իմացաւ:

4. է ընդգիմանալ:

5. չունի:

6. ետես և.:

7. շնորհին առ Յովնան:

8. չունի:

9. միևնչև.:

10. յԵգիպտոս:

թիւն զերկիրն աւետեաց . զոր և առաքեալն ասէ , թէ Հնդ նմին յարոյց և ընդ նմին նատոյց յերկնաւորս՝ ի Քրիստոս Յիսուս : Այս՝ բարձրագոյն պատիւ քան զառաջինն , և աստուածատեսակագոյն քան որ ի դրախտին ունէր զփառան . զի յամօթ պրասցէ զպատրողն , և զպատրեալն գերակատար փառօք զարդարեացէ ընդ ինքեան՝ ի փառս իւր : Աստանօր կատարեցաւ վերլուծական տարացոյց համեմատութեան Յովնանու և Ադամայ ընդ՝ (ըստ) մերում փանաքի տեսութեանս :

Ասացուք և սուղ ինչ զՏեառն մերոյ նկարագրութիւն , ստուերագրելով ի նմա զճշմարտութեանն պատկեր . և զի օրինակ էր Յովնան՝ Տեառն մերոյ : Զի որպէս առաքեցաւ նա քարոզ՝<sup>2</sup> հեթանոսաց , ըստ այնմ՝ , եթէ Եզի զքեզ յուխտ ազգի և ի լոյս հեթանոսաց . իսկ նա յապաղէր առ ժամանակ ինչ , ո՛չ յաշաղելով զփրկութիւն հեթանոսաց՝ որպէս Յովնան , այլ անտեսութեան աղազաւ մինչև ցիսաչն . զի նախ կապեացէ զհօրն , և ապա՝ յափշտակեացէ զկարասի նորա , գերելով զգերեալն ի նմանէ : Եւ միւս ևս , զի հասցէ զպատճառ հրէական անհաւատութեանն : Որպէս և<sup>3</sup> Յովնան՝ զի ո՛չ կամէր տալ զՀրէից վարդապետութիւնն այլոց՝<sup>4</sup> ազգաց , զի յամենայն կողմանց դատապարտեցի անհաւատութիւն ժպիրհ ազգին : Զի Աստուած և մարգարէքն , և նոյն ինքն Քրիստոս երկնէին զփրկութիւն նոցա , վասն խոստմանն Արրահամու սիրելոյն , և նոքա ո՛չ կամեցան : Եւ որպէս Յովնան ո՛չ քարոզեաց հեթանոսաց մինչև թաղեցաւ ի խորս ծովուն , և յետ երկից աւուրց ելեալ յանդնդոց դժոխոց՝ եղև քարոզ հեթանոսաց , և կատարեաց զկամս Աստուծոյ : Սոյնպէս և Տէրն մեր հրաժարէր ի հեթանոսաց , ասելով<sup>5</sup> . Աչ ուրեք առաքեցայ , բայց եթէ առ ոչխարս կորուսեալս տանն Խորայելի : Եւ դարձեալ , եթէ Աչ է արժան տոնուլ զհաց մանկանց և արկանել շանց : Եւ առաքելոցն ասէր . Խ ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայք , այլ առ ոչխարս կորուսեալս<sup>6</sup> Խորայելի : Իսկ յետ յարութեան առաքէ զաշակերտան՝ աշակերտել զհեթանոսս , և մկրտել յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Եւ որպէս էջ Յովնան ի հաստատուն երկրէ՝ ի լոյծ և յանհաստատ յաղտաղտուկս<sup>7</sup> շուրս ծովուն . այսպէս և Տէր մեր էջ յերկնից ի հոսանուտ և յանկայուն յայս մեր բը-

1 . ԹԳՃ . ըստ :

2 . քարոզել :

3 . չունի :

4 . այլազգեաց :

5 . չունի վրիպակաւ :

6 . տանն Խորայելի :

7 . յաղտաղտուկ :

նութիւնս, որ միշտ հաղմով անօրէնութեան<sup>1</sup> ալէկոծի: Եւ իբրև էջ Յովնան ի նաւ անդր, և կայր ընդ հեթանոսս՝ իբրև զմի ի մէջ նոցա. և Տէր մեր իբրև զմի ի մէջ շքր- ջէր ընդ մեզ: Եւ ի խռովել ծովուն՝ եղաւ ատեան դատաստանի. և կայր Յովնան դատապարտեալ յատենին՝ իբրև զպարտաւոր: Եղաւ ատեան դատաստանի յերուսաղէմ. եկաց Տէր մեր դատապարտեալ յատենի՝ առաջի Պիղատոսի, ըստ այնմ, թէ Ինքնին Տէր ի դատ եկեսցէ ընդ ծերս ժողովրդեանն:

Հարցաւ Յովնան թէ ուստի՞ ես. խոստովան եղև և ոչ ուրացաւ՝ եթէ ծառայ Բարձրելոյն եմ: Հարցաւ և Տէր մեր ի Պիղատոսէ՝ թէ ուստի՞ ես. խոստովան եղև և ոչ ուրացաւ, թէ թագաւոր եմ. ոչ յայսմ աշխարհի, այլ ի վերուստ, որպէս ասաց Առաքեալ՝ թէ Ակայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի: Արկին վիճակ նաւաստիքն իւրեանց<sup>2</sup> և Յովնանու. և ել վիճակն մահու Յովնանու: Արկին վիճակ և Տեառն մերոյ և մեզ. և ել վիճակն<sup>3</sup> մահու Տեառն մերոյ: Այն իսկ էր վիճակն, զոր ասէին քահանայքն թէ Ըստ օրինաց մերոց պարտ է դնալ ի խաչ երանել: Չի թէպէտ և նախանձու շարութեամբ ասէին, սակայն ճշմարտութեանն լինէին ջատագով. զի յօրէնս նոցա գրեալ էր մահն նորա, օրինակ գառին՝ որ զենեալ լինէր զատկին: Եւ Մովսէս իսկ յայտնապէս ցուցանէ՝ ասելովն. Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ: Եւ Աստիափայ՝ մարգարէութեամբ վիճակէ զմահ Տեառն մերոյ, զի մի կորիցեն ազգք մարդկան, այլ փրկեսցին մահուամբ նորա: Չնոյն և Մովսէս նկարագրեաց յերկուս նոխազան վիճակեալս, մին<sup>4</sup> Տեառն, և մի Ազայելի. այսինքն՝ քարկոշքեան Աստուծոյ: Ո՛ր և Տեառն ելանէր վիճակ, սպանեալ լինէր. իսկ Ազայելին՝ ազատեալ: Ասպեալ ի նա որդան կարմիր, և արձակէին յանկոխ անապատ. և անդ կերակրէր<sup>5</sup> զերանու- թիւն երկրին զամն ողջոյն, անմիտս պահելով ի գաղանաց: Եւ ի կատարել ամին՝ դառնայր անդրէն ի բանակն, սպիտակափայլ<sup>6</sup> և լուսակիզն սաւօք մաքրեալ, և կարմրութեան որդանն՝ ի նոյն սպիտակութիւն փոխարկեալ, որպէս ասէ Ասայի. Եթէ իցեն մեզք ձեր իբրև զձանձախարիթ, այսինքն՝ իբրև զնազ այծեաց, իբրև զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև զյորդան կարմիր՝ յատուս սպիտակու-

1. ԺԳՃ. անօրէնութեանը:

2. ինքեանց:

3. վիճակ մահուան:

4. ԺԳՃ. և. մին:

5. կերակուրիչը (վրիպակաւ գրչի):

6. սպիտակացեալ:

7. սպիտակութեան:

քեան<sup>1</sup> փոխեցից: Արդ, ըստ այսմ՝ օրինակի ետուն<sup>2</sup> վիճակ Տեառն մերոյ, զի մեռցի. և որք վիճակեալ էին ի մահ վասն բարկութեան Տեառն, ազատեալք ի մեղաց և սրբեալ՝ արձակեացին յանկոխ անապատ, այսինքն՝ յերկինս: Եւ զի բոլոր գործք Յովնանու օրինակ էին Տեառն մերոյ, արդ, մի ինչ թողցուք՝ ըստ կարի մերում՝ զբոլոր ստուերագրութիւնն հանել ի ճշմարտութիւն:

Եւ արդ, յորում ժամու հատու վճիռ մահու վիճակաւ ի վերայ Յովնանու. ո՛չ ապաքէն մինչ առաքեցաւ քարոզ հեթանոսաց, և դտաւ անհնազանդ: Սոյնպէս<sup>3</sup> և Տեառն մերոյ վիճակեցաւ մահ, յորժամ առաքեցաւ<sup>4</sup> աւետարանել հեթանոսաց զփրկութիւն, դառնալ<sup>5</sup> ի չարեաց՝ առ Աստուած և կեալ: Եւ զի անհնազանդ եղև Յովնան՝ ըստ ազատութեան կամաց իւրոց. իսկ Տէր մեր կոչեցաւ անհնազանդ՝ ո՛չ ըստ կամս իւր, այլ առեցելոյն<sup>6</sup> մերոյ բնութեանս. որպէս ասէ Առաքեալ, թէ Յորժամ հնազանդեցի նմա ամենայն ակնկազանդ<sup>7</sup> բնոչքիւնս, յայնժամ և ինքն Որդի հնազանդեցի այնմ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն ապրատաւք<sup>8</sup> բնոչքիւնս: Զի որպէս վասն մեր մեղք կոչեցաւ՝ որ անմեղն էր<sup>9</sup>, և եղեալ անէծք վասն մեր. սոյնպէս և անհազանդ կոչի վասն մեր՝ մինչ ի վախճան կատարածի. մինչդեռ ազատութիւնս<sup>10</sup> մեր՝ անհնազանդութեամբ ըստ կամաց<sup>11</sup> շարժի, և նա իբրև զզլուխ՝ ընդ մեզ կրէ զմեղս<sup>12</sup>: Իսկ յորժամ կամս<sup>13</sup> մեր խափանեցի<sup>14</sup> ի վախճանի, և ազատութիւնս մեր ամբարձցի ի գերակատար հնազանդութիւն, և խափանեցէ զամենայն ներհակս իշխանութեան, յայնժամ և ինքն բոլոր<sup>15</sup> իւրովքն հնազանդեցի Հօր իբրև զզլուխ՝ իւրովք<sup>16</sup> բոլոր անդամօք. զի եղիցի Աստուած յայտնապէս երևեալ՝ յամենայնի բնակելով. և տարեալ՝ անտանելին, անբաժանարար<sup>17</sup> միացեալ յարժանիսն: Աստուերեմն՝ որպէս Յովնան, որ յառաջն էր հնազանդ, և դարձեալ ի նոյն առաջին կատարեալ հնազանդութիւն փոխեցաւ, և ընդ ինքեան վերափոխեաց զանհնազանդութիւն հեթանոսաց՝ ի կատարեալ հնազանդութիւն Հօր. այսպէս

1. ժԳՃ. ևտ:

2. ոչք:

3. ասպէս:

4. եկև:

5. դասնաչոյլ:

6. ըստ առեցելոյն:

7. ակնկազանդոչքիւնս:

8. ապատաւքոչքիւնս:

9. չունի:

10. ակնկազանդոչքիւնս:

11. կամաց մարմնոյ:

12. զմեղս:

13. կամք:

14. խափանեցիւն:

15. չունի:

16. բոլոր իւրովքն անդամօք:

17. յամբաժանարար:

և Տէր մեր զապստամբութիւն հեթանոսաց ան դարձոյց ի կատարեալ հնազանդութիւն կամաց Հօր :

Եւ զի ի<sup>1</sup> դասել զՅովնան յատենի անդ, ծովն լի եղև խռովութեամբ, զգողի հարեալ տատանէր յանդնդոց. և յորժամ ընկեցաւ Յովնան ի ծովն՝ եղև խաղաղութիւն մեծ ի<sup>2</sup> ծովուն. նոյնպէս<sup>3</sup> և Տէր<sup>4</sup> մեր իբրև դատապարտեալ յատենի և նախատանօք հանին ի խաչ, երկիր շարժեալ ի հաստակառոյց հիմանէ՝ դարձեալ<sup>5</sup> գորդեալ խռովէր շարժմամբ, առաւել քան զխռովութիւն<sup>6</sup> ծովու. և ի բարձանց լուսաւորք խաւարազգեաց եղեալ տատանիր : Եւ որպէս եղև խաղաղութիւն ծովուն՝ յիջանել անդ Յովնանու. սոյնպէս և զՏէր մեր իբրև իջուցին ի գերեզման, եղև խաղաղութիւն մեծ աշխարհի<sup>7</sup>, ըստ այնմ, թէ եղև խաղաղութիւն քաղոքսն նորա :

Եւ ի կլանել վիշապին զՅունան, կարծեաց կերակուր լինել ինքեան. այլ մոռացեալ<sup>8</sup> որովայն նորա զբնական կիրս ապականութեան իւրոյ, և զտեղի առ արձանացեալ ապականութիւնն առ Յովնանու : Սոյնպէս<sup>9</sup> եկուլ մահ ըզՏէր մեր, և կարծէր ըմբռնել զըմբռնիչն իւր. և ըմբռնեալ ի նմանէ՝ լուծաւ ապականութիւն իշխանութեան նորա, և ել նստաւ իշխանապետ ի<sup>10</sup> վերայ մահու և դժոխոց, որպէս ասաց Յակոբ. Ելեր բազմեցար իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու՝ ի վերայ մահու և դժոխոց. և ո՞վ կարացէ<sup>11</sup> յարուցանել զքեզ : Եւ որպէս գազանն այն՝ որ ապականիչ էր այլոց կենդանեաց, լինէր Յովնանու տեղի զբօսանաց և կառք փառաց նորա, և շրջեցուցանէր զնա իբրև<sup>12</sup> զթագաւոր. սոյնպէս<sup>13</sup> և բռնաւոր վիշապն մահու, որ ապականողն էր բոլոր կենդանեաց<sup>14</sup>, լինէր Տեառն մերոյ տեղի զբօսանաց. և իբրև երիվար փրփրերախ<sup>15</sup> և հանդարտ՝ ընդ ձեռամբ վարժողին հնազանդէր, որպէս ասէ Յօր, թէ Որ առ այլս<sup>16</sup> վիշապն էր վայրագ, առ քեզ՝ իբրև զարջառ<sup>17</sup> ոչ մարմին, այլ խոտ ճարակէ : Եւ որ առ Ադամայ բանաւոր<sup>18</sup> վիշապն էր, առ քեզ իբրև զձագ մի

- |                              |                 |
|------------------------------|-----------------|
| 1. ԺԳՃ. չունի :              | 10. չունի :     |
| 2. չունի :                   | 11. կարէ :      |
| 3. այսպէս :                  | 12. որպէս :     |
| 4. զՏէր :                    | 13. ասպէս :     |
| 5. չունի :                   | 14. կենդանեաց : |
| 6. զխռովութիւն աշեաց ծովու : | 15. փրփրերախ :  |
| 7. արևելայն աշխարհի :        | 16. առ այս :    |
| 8. մոռացաւ :                 | 17. զարջառ :    |
| 9. Մանգէս :                  | 18. բանաւոր :   |

կապով կապեալ՝ եղև խաղալիկ սողայոց . զի անցոյց շրու-  
շակ<sup>1</sup> ի քիթս նորա , և դանդանաւանդ ետ<sup>2</sup> ի կզակս նո-  
րա . և դարձոյց անդէն յորջ իւր , որպէս զՍենեքերիմն զայն  
հպարտ , զի յերկրի իւրում մեռցի ի ներքին սանդարա-  
մետս դժոխոց , զի մի՛ ելցէ հոտ պղծութեան նորա ապա-  
կանել գերկիր<sup>3</sup> կենդանեաց :

Եւ որպէս ե՛լ Յովնան անապական ի կիտոսէ անտի , և  
չոքաւ լինել քարոզ հեթանոսաց . սոյնպէս և Տէր մեր մինչ  
ե՛լ անապական ի դժոխոց , առաքեաց զաշակերտսն քարո-  
զել<sup>4</sup> հեթանոսաց , աւետարանել զբարութիւն : Եւ այն՝ որ  
հրաժարէր արկանել շանց զհաց մանկանց , առաքեաց մը-  
կըրտել զամենայն հեթանոսս : Եւ<sup>5</sup> խնդրեցին Հրէայքն ի  
Տեառնէ նշանս<sup>6</sup> ի բարձանց . իսկ նա ի խորոց ետ նշան ,  
ասելով . Ազգս այս շար<sup>7</sup> նշան խնդրէ , որ բազում անգամ  
ետես նշան<sup>8</sup> և ո՛չ հաւատաց : Արդ , տայց նշան ո՛չ ի բար-  
ձանց , այլ ի խորոց . զնշանն Յովնանու , որ է նշան կորըս-  
տեան ձերոյ . զի<sup>9</sup> ո՛չ ետ բանիւ նշան կորստեան Նինուէի ,  
այլ ինքն<sup>10</sup> եղև նշան նոցա : Զի թէ<sup>11</sup> ապստամբեսցին իբրև  
դՅովնան , կորիցեն յանդունդս խորոց . և եթէ հաւանես-  
ցին իբրև զնա , փրկեսցին ի մահուանէ : Սոյնպէս և Տէր  
մեր ետ նշան զյարութիւնն իւր , զի թէ հաւատասցեն ,  
յորժամ ելցէ<sup>12</sup> նա անապական ի դժոխոց՝ վերաբերելով  
ընդ ինքեան զմեռեալս , լուծանելով գերկունս մահու , ապ-  
րեսցին . ապա թէ ոչ՝ անհաստատութեամբն իւրեանց կո-  
րիցեն : Եւ զի գիտէր Տէր մեր՝ թէ անհաստատութեամբն<sup>13</sup>  
կորնչելոց են , վասն որոյ առական յայտնեաց զկորուստ  
նոցա . Արք , ասէ , Նինուէայիք՝ ի դատաստանի դատա-  
պարտեսցեն զազգս զայս , զի հաւատացին Յովնանու . և  
ահա՛ մեծ քան զՅովնան է աստ . զի նա ծառայ , և սա  
տէր ծառային :

Զգալուստ նորա ո՛չ ոք քարոզեաց յառաջ . իսկ զսա՛  
րոյր մարգարէքն : Եւ կորուստ քարոզեաց , իսկ սա փըր-  
կութիւն աւետարանեաց\* : Եմա դիւրաւ հաւատացին հե-  
թանոսք , իսկ զսա ո՛չ ընկալան Նբրայեցիք . սորին<sup>14</sup> վասն

1. ԺԳՁ . շրաշակ :

2. չուսի :

3. գերկիրս :

4. քարոզ :

5. Եւ զի խնդրեցին :

6. նշան :

7. չուսի :

8. նշանս :

9. զի նա :

10. ինքնին :

11. եթէ :

12. ելանէ :

13. անհաստատութեամբն :

\* Եւ ո՛չ նշան սրայ , իսկ  
սա՛ քարոզել նշանօք աշխա-  
րակեաց :

14. ակին :

սաստկագոյն տանջելոց են ի դատաստանի: Աւ զի լուան գողք և աւագակք Յոսիւանու, և դարհուրեալ դարձան ի չարեաց իւրեանց՝ յԱստուած կենդանի. լուան հեթանոսք քարոզութեան Տեառն մերոյ, և դարձան սրտիւք առ Աստուած ճշմարիտ: Մերկացաւ թագաւորն զփառս իւր, և զգեցաւ քուրճ. որպէս՝ թագաւորք հեթանոսաց մերկացան զհպարտութիւն իւրեանց, և խոնարհեցան ընդ ամենահեշտ լծովն Քրիստոսի: Թողին և երկրասէրք զվաճառաշահութիւն իւրեանց<sup>2</sup>, և արհամարհեցին զսակի և գարծաթ. և սրբեցան ո՛չ միայն յայլանդակ<sup>3</sup> պղծութեանց, այլ և ի սուրբ ամուսնութեանց պահէին զանձինս իւրեանց: Արպէս<sup>4</sup> եկեղեցի հեթանոսաց արհամարհելով զերկրաւոր մեծութիւնս, սիրեաց<sup>5</sup> զսրբութիւն կուսութեան, և մաքրապէս միացան յԱստուած: Սգացան և մանկունք ի գիրկս մարդ իւրեանց, որպէս եկեղեցիք հեթանոսաց, որ ծանեան ի փոքրկանց մինչև ցմեծամեծս զարարիչն իւրեանց:

Ա՛յ Յոսիւան ի քաղաքէ անտի, և նստաւ հանգէպ Նինուէի՝ տեսանել զհրաշո՞ սատուածագործս, թէ՛<sup>7</sup> զի՞նչ լինելոց է: Ա՛յ և դդմենին՝ հովանի առնել<sup>8</sup> նմա ի տաս խորշակէ՞<sup>9</sup> կիզման արեգականն, որ դարդարեալ էր խիտ առ խիտ ուղեչաւք և թանձրամած տերեւաւք<sup>10</sup> և ո՛չ պտղովք, յօրինակ տաճարին՝ որ դարդարեալ էր ազգի ազգի սպասուք, և քահանայական դարդուք, վարագուրաւք, և աշտանակաւք<sup>11</sup> և անաւգուտ զոհից պատարագաւքն՝ իբրև զսաղարթագուարճ<sup>12</sup> տեր՝ ոք, և ո՛չ պտղովք արդարութեան կամ բարեպաշտութեան ինչ: Աւ զի եկաց դդմենին ծաղկեալ ժամէ ի ժամ, և հարեալ<sup>13</sup> յօրդանէ առաւօտուն՝ գօսացաւ. որպէս եկաց տաճարն հազար<sup>14</sup> ամ<sup>15</sup> իբրև զմի օր, զարդարեալ պայծառութեամբ սաղարթիւք. ընդ<sup>16</sup> որ հովանեալ իւրով անուցանէր զհրէական<sup>17</sup> ազգն՝ ի տապոյ անտի<sup>18</sup> գերութեան հեթանոսաց. և ապա հարեալ յօրդանէ անտի Ափսպիանոսի, և գօսացեալ բարձաւ ի միջոյ՝ ի ծագմանէ առաւօտուն, որ է Տէր մեր, ծագումն փառաց Հօր, որպէս

1. ԺԳՃ. որպէս և:

2. չունի:

3. յայրենդակ:

4. որպէս և:

5. չունի:

6. զհրաշագործս (վրիպակ է):

7. չունի:

8. ունել:

9. ի տապակախորշակի:

10. ստուշերիւք:

11. աշտարակօր:

12. սաղարթագուարճ:

13. նստեալ:

14. գնացար:

15. և իբրև:

16. որ ընդ:

17. զհրէայսն:

18. անգիտութեան:

ասէ Լսայի<sup>1</sup>, թէ Որպէս<sup>2</sup> զառաւօտ պատրաստական գըտ-  
ցուք զնա: Ձի ի ծագել ճշմարտութեանն՝ պարտ է<sup>3</sup> բառ-  
նալ ստուերին, որպէս ի ծագման արեգականն՝ աղօտա-  
գունից փայլմանց լինի շիջումն<sup>4</sup>:

Եւ քաղէին, ասէ, ոգիքն Յովնանու ի տապոյ արեգա-  
կանն, և ո՛չ գտանէր տեղի հովանւոյ ապաստանի. որպէս  
և այսօր Հրէայքն յամենայն կողմանց նեղեալք և հալա-  
ծեալք՝ ո՛չ ունին<sup>5</sup> տեղի ապաստանի, ո՛չ տաճար և ո՛չ գօ-  
րինացն մխիթարութիւնս: Եւ ասէր Յովնան. Լա՛ն է ինձ  
մեռանել՝ քան այսպիսի<sup>6</sup> կալ չարչարանօք: Եւ և լաւա-  
դո՛յն ևս<sup>7</sup> էր հրէական ազգին մեռելութիւն մարմնոյ, քան<sup>8</sup>  
մեռեալ հոգւով<sup>9</sup> կեալ կտտանօք, և անարգութեամբ շրջել  
յերկրի: Եւ զի ամաչէր մարգարէն ընդ գործս ժողովըր-  
դեան իւրոյ, հայելով ի դիւրահաւան կեանս հեթանոսաց.  
որպէս և այժմ ամօթալի են կեանք նոցա ի մէջ պար-  
կեշտից հեթանոսաց: Եւ զի ցրուեցան նոքա ընդ բոլոր  
ծագս աշխարհի՝ ըստ մարգարէութեանն՝ թէ Յրուեսցի զա-  
ւակ նոցա ընդ հեթանոսս և ընդ գաւառս, ըստ շարու-  
թեան իւրեանց: Ժողովեցան հեթանոսք, և եղեն եկեղեցի<sup>10</sup>  
Քրիստոսի, միաբանութեամբ հաւատոց՝ միով հոգւով միա-  
ցեալ ի մարմին մի, յօդիւ խաղաղութեամբ՝ նոր նորոգեալ<sup>11</sup>  
ի գիտութիւն ըստ պատկերի Աստուծոյ. և իբրև անդամք՝  
չարադրեալք ի գլուխն Քրիստոս<sup>12</sup>, զի ի նմանէ ընկալցին,  
սիւսեալ ընդ բոլոր մարմին, զչնորհս կենաց Հոգւոյն, յա-  
րախաղաց բղխամբ կենդանացեալք և նորոգեալք հոգւով  
գիտութեամբ. զի միաբանութեամբ ի մի բերան փառաւո-  
րեսցեն զՀայր և զՈրդի և զՀօգին սուրբ այժմ և միշտ և  
յաւիտեանս<sup>13</sup>:

- |                                    |                          |
|------------------------------------|--------------------------|
| 1. ԺԳՃ. մարգարէն:                  | 7. իսկ:                  |
| 2. իբրև.                           | 8. քան թէ:               |
| 3. եր:                             | 9. ոգւովք կալ:           |
| 4. ԺԳՃ. շրջումն:                   | 10. եկեղեցիք:            |
| 5. ունեիկն:                        | 11. նորոգել:             |
| 6. զայսպիսի կեանք չարչա-<br>րանօք: | 12. Քրիստոս միացեալ:     |
|                                    | 13. յաւիտեանս յաշխտենից: |

### ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Թէպէտև ժԳ Ճառընտիրն շատ աւելի հին է՝ քան Գ,  
սակայն վերջինս շատ աւելի ընտիր է՝ ուղղագրութեան մա-  
սին, և հին բնագրին աւելի հաւատարիմ մնացեր է: ԺԳ

ձառընտրի գրիչն՝ ընդհակառակն՝ ազատօրէն և տգիտութեամբ վարուած է իւր բնագրի հետ. և այս՝ անտի իսկ քաջ կը տեսնուի, զի մի և նոյն բառերու և բացատրութեանց մէջ, ուր միանգամ կը տարբերի, երկրորդ անգամուն դարձեալ Ք ձառընտրի ուղիղ ընթերցուածոց համաձայն կը գրէ: Այս թերութեամբ հանդերձ՝ տուաւ մեզ, — ինչպէս տեսանք, — մի քանի ուղիղ ընթերցուածներ ևս, որոնցմով պարզուեցան Ք ձառընտրի այս ինչ կամ այն բառի կամ առման մասին ունեցած տարակոյսներս: Յամենայն դէպս, սոյն ճառն իւր լեզուի համեմատական մաքրութեամբն և կորովով հանդերձ, պէտք եմ ըսել, թէ ունի ինչ ինչ, որք է դարու մեր երիցագոյն թարգմանչաց ամենաընտիր հայկաբանութեան չեն պատշաճիր: Դարձեալ, ի նկատի առնելով այն տեղին, զոր աստեղանիչով ծանօթագրեցինք, ուր Յովնան մարգարէն Նինուէի քարոզելէն վերջ՝ այլ ևս չի դառնար առ Եսրայէլացիս, տեսնելով որ իւր մարգարէութիւնը չկատարուեցաւ, և ինքն ստախօս պիտի համարուի իւր ազգակցաց առջև. այլ իւր մայրն առած՝ կ'երթայ և կը բնակի հեթանոսաց մէջ, տարակոյսնիս աւելի կ'աճի նորա հնութեան մասին: Եւ յիրաւի, Մահ մարգարեից գըրութիւնն եթէ Նպիփանու Կիպրացւոյ կամ Դորոթէոսի հարազատ գործ չէ, դժուար է ընդունել, որ է դարում՝ Անանիա թարգմանչին ծանօթ եղած լինէր: Ուստի դարձեալ կը կրկնենք, թէ այս և լեզուական մի քանի առումներ ի նկատի առած, վերապահութեամբ միայն Անանիա թարգմանչի անուամբ կը հրատարակենք զայս, մինչև որ ուրիշ մեզի անծանօթ գրչագրեր գան և նոր լոյս սփռեն այս մըթին կէտիս վերայ:



## ՅԱՂԱԳՍ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏԶԻ

# ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

**Ի** ձեռն առեալ զիմաստս հոգւոյն ձեռնառուութեամբ շնորհողին իմաստութեան Հոգւոյն՝ ըստ չափոյ տկարութեանս մերոյ, քանզի և ըստ արժանաւորութեան նորա թուի թէ (և) ոչ հրեշտակք բաւական են տաւնել կամ ճառել. զի թէ որ վկայութիւն ի Տեառնէ ընկալաւ՝ բարձրագոյն գոլով ի ծնունդս կանանց, ո՞վ ոք պանձասցի ըստ արժանեաց նորա որոշել բանիւ: Արդ, թէպէտ և յարժանաւորութենէն վերջանամք, սակայն ոչ պարտ վարկանիմք անճաշակ մնալ յայնպիսի աղբերէն կենդանի: Զի թէ սուղ ինչ պատահիցիս, սակայն բաւական է հոգւոր կերակուրն զհոգիս լսողացն պարարել, մանաւանդ զայսպիսոյ բարձրագունոյ և տատուածայնոյ լսել պատմութիւն, զոր սահմանեաց զնա Տէր՝ գոլ կատարումն աւրինաց և մարգարէից, և սկիզբն նոր քարոզութեանս, կարապետ գոլով Բանին և աւետարանել ի վերայ լերինն բարձու՝ զանլուծանելի կենացն բերեալ զա-

\* Ծառս ընդօրինակուած է Պարիսու ազգային գրատան թիւ 45 գրչագրէն, որ է Ծառընտիր բաղորդիր, գրեալ յամի Տեառն 1555, «ի վանս որ կոչի աամիօրեն Գաւիճակ, ի ժամանակս կաթողիկոսութեան Մխիթարայ և ի թագաւորութեան Ասստանդեայ Հայոց թագաւորի, և յեպիսկոպոսութեան Ստեփաննոսի որ ի գաւառին Սուրխաթ կոչելոյ Արիմ»: Գրչագիրս պակասաւոր է յառաջոյ և ի վերջոյ. իսկ մնացածն այլ ցեցակեր և դժուարընթեանլի: Ալ պարունակէ յիսնիւ չափ զանազան հետաքրքրական ճառեր մերազգի և օտար հարց, որոց սմանք անվերնագիր են և անանունս, յորս ի մասնաւորի ուշադրաւ են Ստեփաննոսի Սիւնեցոյ ճառերը: Գծքազգաբար ուրիշ օրինակ չունէինք վանացս գրատան մէջ, որպէս զի բազմաթիւ լով՝ միմին տեղերը պարզէինք:

ւետիս : Զի որ ի վաղնջուց երկնէին հոգելից մարգարէքն ,  
 և ցանկային արդարքն տեսանել զկենաց աղբիւրն բղխեալ  
 յերկրի , որում արժանաւորեալ մեծն ի ծնունդս կանանց՝  
 ո՛չ միայն տեսանել , այլ և մկրտել զբարձողն մեղաց , և  
 հաղորդ լինել մաքրութեան նորա . զսա յառաջաձայնեցին  
 մարգարէքն , որ գուշակեցին զգալուստ Բանին : Եւ այս էր  
 նոր պատիւ բարձրագոյն և աստուածատեսակ , ընդ Բանին  
 յառաջ գուշակիլ ի մարգարէիցն , զոր Եսայեայ ձայն բար-  
 բառոյ ասաց զնա յանապատէ : Եւ այլ ոմն՝ հրեշտակ ա-  
 ռաջի երեսաց Տեառն , պատրաստել նմա ճանապարհ . որոյ  
 և կեանքն զաւրէն հրեշտակի անկարաւտ գոլ ամենայն կրից  
 կենցաղոյս : Արդ Աբրահամ ա՛ռ սկիզբն ծննդեան Տեառն  
 մերոյ աւետարանել մեզ . զի գրեալ է , ասէ , Երևեցաւ Տէր Աբ-  
 րահամոյ ի միջաշրէի՝<sup>1</sup> , յորում ժամու ամենայն ստուերք ,  
 խորշք ուռճացեալ լուսով առլցեալ լինին . զի յերևել ճշմա-  
 րիտ լուսոյն՝ ամենայն խորք խաւարին խորհրդաւք մարդ-  
 կան ի բաց հալածեալ լիցին , և կեանք և լոյս թագաւո-  
 րեսցէ : Արպէս ականատես իսկ՝ ընկալան Աբրահամ՝ և  
 Սառա զծերութիւն մեռելութեան և ամլութիւն անպտուղ ,  
 մուացան զբնութեան կիրս . որպէս յերևել լուսոյ՝ ան-  
 գործ մնայ խաւարն , և ծերութիւն և ամլութիւն՝ ի պըտ-  
 զածնութիւն փոխեցան . և վկայ լիցին թէ ճշմարիտ Աս-  
 տուած էր որ երևեցաւ : Արպէս ի սկզբանն երևեցան հրեշ-  
 տակքն սքանչելեաց , սոյնպէս և ի վախճանի գալստեանն .  
 զի ի միտ առցուք , թէ նոյն որ զգաւսացեալ անպտուղ ար-  
 գանդն՝ ի պտղարերութիւն փոխարկեաց , նոյն ի վախճան  
 կատարածի զանպտուղն ծննդական արար : Արպէս առ խնդու-  
 թեան ոչ կարաց հաւատայ Սառա պարգեւին , սոյնպէս և  
 Զաքարիա՝ աւետաւորիլ ի հրեշտակէն : Զի անդ ըստ ար-  
 ժանի յանցանացն ո՛չ պատժեցաւ Սառա , զի լուծիչն յան-  
 ցանաց մեր՝ էր , և մեղքն ո՛չ կարէին տիրել . իսկ աստ  
 զի ծառայ էր աւետարներն՝ ո՛չ էր իշխան թողուլ զմեղսն ,  
 յիրաւի պատժեաց , ոչ զայլ ոք յանդամոցն , այլ որ մեղաւ  
 ի բանսն՝ զանբանութիւն կրեաց : Այլ խորհուրդ բարձրա-  
 գոյն և աստուածային նկարեաց մեզ , որով իմանամք եթէ  
 ի գալ ճշմարտութեան՝ պարտ էր ամենայն ստութեանցն լուել .  
 զի սկիզբն մահու ամենայն ստութիւն շարին եղև , զի ստու-  
 թեան հայր սաստանայ է , որ թագաւորեաց մեզ մինչև ի

1. Տես Մենդ . ԺԸ . 1 , յորմէ կը տարբերի այս թարգմանու-  
 թիւնս : Այսպէս են նաև ի յաջորդն Ս . Գրքէն մէջ բերուած  
 կոչումներէն շատերը , զորս պիտի ծանօթագրենք՝ Ս . Գրքէն  
 սենեցած նշանաւոր տարբերութիւներով հանդերձ :

գալ Բանին ճշմարտութեան՝ որդւոյն Ասատուծոյ, որ լուեցոյց զստութիւն և զանհաւատութիւն, և թագաւորեցոյց զճըշմարտութիւն: Եւ եկաց նա պապանձեալ մինչև եկն յայտնեցաւ ձայն ճշմարիտ Բանին, և արձակեաց զկապեալ լեզու հաւրն: Նախ և այսր բարձրագոյն ցուցանէ մեզ խորհուրդ, զի ի գալ Բանին՝ արձակեացին բոլորից մարդկան կապեալ լեզուք, զոր կապեաց սատանայ. և բացցին բերանք՝ աւրհնել զՏէր: Չոր և Տէր իսկ յաւրինակ ամենեցուն կալեալ զլեզու համերն, և արկեալ զմատունս յականջս՝ հոգւոց եհան ի վերայ դատապարտեալ պատկերին իւրոյ, և արձակեաց ողորմութեամբ իւրով: Եւ զի անուանեաց Յով(հ) աննէս՝ ձայն զարթուցիչ, խոր քնով ըմբռնեալ էին հոգիք հեթանոսաց՝ ի թմբրութիւն մոլորութեան մեղաց, զի զարթուցէ զնոսա՝ սգաստանալ ի լուր բանին: Եւ զի ձայնն՝ նիւթ է բանին, զի ի մեզ ձայնի է բան. զի ձայնի պէտք և նշանակ է նա, և նա յաւդէ իսկ ճշմարիտ բան, յաւդեալ և նշանակեալ ասի: Եւ զի մարգարէքն ամենայն ձայն և նշանակ միայն. ի թէպէտ և նշանակէին զգալստենէ Փրկչին, այլ ոչ կարէին զճշմարիտն ցուցանել մեզ մինչև ի գալ Բանին. Չի զԱստուած ոչ որ ետես, բայց Միածինն որ ի ծոց Հաւր՝ նա պատկեաց մեզ՝: Չի զամենայն հեռացեալս և զիսխատեայս ձայնիւ դարձուցանեն, և ապա բանիւ տեղեակ առնեն. սոյնպէս և մարդոյս բնութիւնս փախստական եղեալ յարարողէն՝ զհետ ընթացեալ մահու և մոլորութեան, զթացեալ հայրախնամ ողորմութեամբ իւրով, նախ ձայնեաց ի ձեռն Յովաննու, և տեղեակ արար Բանին ճշմարտութեան: Չի այլ մարգարէքն զփախձան ընկալան. իսկ սա կենդանի ձայն էր, վասն այնորիկ սա կոչեցաւ ձայն. վասն զի և բանն մերձ էր, որ գնայր ի մէջ ձայնին. Յայտ անտի է, զի այլ մարգարէքն ոչ ընդոստուցանել կարացին ի թմբրութենէ զմարդիկ, և ոչ դարձուցանել ի մոլորութենէ, բայց միայն Յովաննէս. ըստ այնմ՝ եթէ Մարտաշորք և մեղաշորք արդարացան ի քարոզութեանն Յովան-

1. Անունս միշտ առանց ի տառի գրուած է գրչագրիս մէջ: Այսպէս նաև յաճախ ճ տառը՝ փոխանակ ծայրի և փոխանակ զայրի և այլն: Լծորդ տառերու փոխադարձաբար իրարու տեղ գործածուելն, նոյն իսկ յատուկ անուանց մէջ, յայտնի իրողութիւն է նաև Յ դարու մեր սւրիշ թարգմանչաց քով. ուստի ընդորինակողին ընծայելի չէ միշտ, այլ արդիւնք է յաճախ յայնժամու գաւառաց տարբեր հնչման և ականջաց:

2. Յովհ. Ա. 18,

նո՞ւ՛ : Սորին վասն և առաքեցաւ առաջի նորա՛ առ ի զգաստացուցանել զթմբրեալ միտս մարդկան ի մեղացն , զի ի միտ առցեն զանբուժելի ցաւսն՝ որք մերձ էին առ մահ , և ո՛չ զգային . զի դիմեսցեն առ բժիշկն հոգւոց : Քանզի անաւգուտ է արուեստ բժշկութեան առ հիւանդն՝ որ ո՛չ արկանեն զանձինս իւրեանց ընդ ձեռամբ բժշկաց . սորին վասն յու՛շ առնէ զցաւս սատակմանն՝ տսելով . Ծնունդք իժից , ո՞յ եցռոյց ձեզ փախչել ի բարկոչքեկեկն՝ որ գալոցն է<sup>2</sup> : Զի թէ ո՛չ ընկալլիք զդեղ բժշկութեան , ընկալլիք զանհրաժեշտ դատաստանն . քանզի տապար է հատանող Բանն , ո՛չ զոտն , այլ արմատոյն դնի . թէպէտ և ո՛չ կտրէ , այլ կայ մնայ դարձին : Զի մինչև ցայժմ պատիժք պատուհասից՝ մինչև յոսան հասեալ հատանէր սովով , սրով և գերութեամբ . իսկ արմատն ամբողջ պահիւր , թագաւորութիւն և քահանայութիւն և արէնք նոցա , յորում վերբստին ընձեղեալ բողբոջ հաստատուն կայիւք : Իսկ յորժամ փոխեցաւ յոստոյն՝ առ արմատն , զի բնաւ ջնջեսցէ զանպըտութիւն թղենոյն , վասն որոյ ասէ . Արարեք պտռոշ արժաւնի ապաշխարոչքեան գործովք՝<sup>3</sup> առ ի կերակրել զՏէր այգոյն , որ եկն իւնդրելով ի մարդկանէ , և զանպտռոշն այրել հրով : Եւ զի հպարտացեալ էին ի միտս իւրեանց՝ դոյ որդիք Արրահամու , որով պարծէին հայրապետաւն , և ո՛չ էին նմանեալ գործովք , սորին վասն ասէ . Ծնունդք իժից , այս ինքն՝ ապականողք երկանց , և ո՛չ որդիք Արրահամու . արդ մի՛ պարծիք դուք յԱրրահամ , որոյ գործքն ո՛չ նմանի , և տարագիր էք յուխտեաց աւետեացն : Զի Աստուած , այն՝ որ կոչէր զչգոյն՝ իբրև զգոյ , կարող էր յանպտուղ քարանց հեթանոսաց յարուցանել որդիս Արրահամու , որպէս յիսկզբանն արար յանպտուղ նորին յարգանդէ , (և) ետ նմա որդիք աւետեալք , և ո՛չ ըստ բնութեան : Արպէս ասէ Եսայի . Հայեցարոչք<sup>4</sup> ի վեմն՝ յոր կոփեցարոչքն : Զի

1. Մատթ. ԺԲ. 41, Աուկ. ԺԱ. 32. ուր սակայն մաքսաւորաց և մեղաւորաց վերայ չէ խօսքը , այլ Նինուէացւոց . հետեալբար , «Յովաննուսն» ուղղագրելի է Յովնանուս :

2. Մատթ. Գ. 7, Աուկ. Գ. 7. «Ո՞ ցոյց» , և այլն : Հեղինակս ուրիշ տեղ ևս նոյնաւորով բայերու կատարեալ երրորդ դէմքը 2 տառով կը գրէ . օր . աղադաւ . եցռոյց , կացռոյց ,

և այլն , որ նորութիւն մ'է :

3. Մատթ. Գ. 8 , Աուկ. Գ. 8, Գործովք և յաջորդ բառերն հեղինակին են , զի մեր թարգմանութեան մէջ չկան , — գէթ այս տեղ :

4. Եսայ. ՄԱ. 1 , ունի՝ «Նայեցարուք ի վեմն հաստատուն յորակ կոփեցարուք» . Ոսկեր. Մեկն. Մատթ. Ճառ ԺԱ. էջ 157. Վենետիկ , ունի համաձայն Հայեցարոչք , բայց և՛

յայն վիմէ անթիւ բազմութիւնս անեցւոյց, զնոյն կարող է և այժմ գործել և զաւետիսն յարդիւնս ածել, զոր խոստացաւ, թէ Հայր ազգաց բազմաց արարից<sup>1</sup> զքեզ: Աչ ըստ բնութեան, այլ շնորհաւք ըստ նմանութեան Աստուծոյ, որ ոչ ըստ բնութեան, այլ ըստ շնորհաց աւագանին էած զարարածս ամենայն: Արդ, այսպէս ձայն բարբառոյ՝ ահաւոր սաստիւ դղրդեցուցանէր զլերինս հպարտացեալս, և տապալէր զբլուրս՝ ի հարթս ճանապարհս, որպէս ասաց Նսայի. զխորածորս մաքսաւորութեամբ սուզեալ, և զգիձութեամբ հեղեղեալս՝ վերաբերէր ի զգաստութիւն պարզութեան: Չի դիւրագնաց լինի ճանապարհ թագաւորին Քրիստոսի. և որ թուին դժուարին մարդկան աղքատութիւնք, հալածանք, գան, սով, մերկութիւն և վիշաք ամենայն, ո՛չ ի բաց բարձմամբ դիւրացան, այլ նոյն ինքն վասն սիրոյն Քրիստոսի նեղութիւնք այլաւքն հանդերձ քաղցրագոյն և հեշտալի քան զամենայն փրկութիւն և զփառս աշխարհիս. որպէս ասէ առաքեալ, թէ Ո՞վ մեկնեցի զմեզ ի սիրոյն Քրիստոսի<sup>2</sup>: Վասն այսորիկ համարձակ լիցի ամենայն մարմնոյ տեսանել զփրկութիւն Աստուծոյ. և զի մի անհաւսն լիցի այսպիսի շնորհէ, ասէ. Չի Տէր խառնեցաւ<sup>3</sup>: Ապա անտուտ ուրեմն է, թէպէտ և անհնարին թուի. զի էր նա կատարումն աւրինաց, պարտ էր նմա սկզբնատպին նմանել, զի գիտացուք եթէ նոյն՝ որ զօրէնան ետ, ըստ նմին ձեացոյց զկատարած նորա և սկիզբն նորոյ կտակիս:

Արդ, ձեացուցանէր սա զնմանութիւն Մովսիսի, զի հանէր նա զԽորայէղ յԵգիպտոսէ ահաւոր նշանաւք, և ազատէր յեգիպտոսական ծառայութենէն. իսկ սա՝ սպառնալիաւք կորզէր յապականութենէ զմաքսաւորս, յիմանալի Փարաւոնէ՝ յազատութիւն փառաց Արդւոյն Աստուծոյ: Եւ Մովսէս եհան յանապատ, լուանայր ջրով երեքաւրեայ, լուանայր ի կանանց մերձաւորութենէ, և ածեալ կացուցանէր առ լերամբն Սինեայ, զի լուիցեն զձայն տեառն կենդանոյ, զոր ոչ երբէք լուան, որպէս ասէ Դաւիթ. Լեզու, զոր ոչ գիտէր, լռաւ<sup>4</sup>: Սոյնպէս և սա ազատեալ ի մեղաց, դարձ ի խոստովանութիւն. և ածեալ կացուցանէր առ Քրիստոս ի Յորդանան գետ, զի լուիցեն զահաւոր բարբառն, ո՛չ ի լեառնէն Սինեայ, այլ ի բարձանց յերկնուտ, եթէ դա ո՛չ է ծառայ որպէս Մովսէս, այլ որդի սիրելի: Եւ զի

յաւելուածս « հաստատուն »: բնագրի տարբերութիւն կ'երևի,

1. Մնդ. ԺԷ. 4. գրուած է 2. Հուովմ. Ը. 35, 39:

և դիցես. իսկ ի ճրդ տան՝ և 3. Նսայ. Խ. 5:

դից: Արարից բայն՝ մի այլ 3. Սաղմ. 2. 6:

գրեալ <sup>1</sup> կայր ժողովուրդն ի բացեայ, ոչ լսէր միայն, այլ և տեսանէր զբանն Աստուծոյ. զի ձեանայր բանն ի ձե հրոյ, նախ աչաց լինէր տեսանելի՝ իբրև զբոց, և ապա ականջաց լինէր լսելի, որպէս ասէ Փիլոն. Չի բանք Աստուծոյ ոչ անբայք եւ, այլ իր տեսանելիք <sup>2</sup>: Սոյնպէս և աստ ոչ միայն լսէին զ' ի վերուստ ձայնն, այլ տեսանէին զՀոգին աղանակերպ՝ զի գայր յորոյ վերայ վկայեաց Հայր ի բարձանց. զի իբրև մատամբ ցուցանիցէ զվկայելն: Եւ զի մկրտեցաւ Տէր մեր ի Յովաննէ, ոչ զի հարկ էր ի նմանէ ընդունել մկրտութիւն, այլ զի կարգն այսպէս պահանջէր, որպէս Տէրն ասաց: Ա՛չ զի այն պիտոյ էր, այլ զի այնպէս վայելէր ըստ կարգաւ տուչութեան արինացն՝ մտանել առ արէնսն, զի մի անկարգութեամբ աւտար երևեսցի արինացն:

Չի բարձրելոյն շնորհ արինացն՝ աւժութիւն էր, զոր կարգեաց Մովսէս. զի ի ձեռն աւժման իւղոյն ընդունէին զաշտիճան քահանայութեան և թագաւորութեան: Եւ և մարգարէքն ևս աւժեալ էին Հոգւով. քանզի մարդն ի դրախտին առաջին զայս ունէր զդեցեալ, եղեալ թագաւոր որոց ի վերայ երկրի, և քահանայ՝ զի գործս բարիս ընծայեսցէ. որպէս Հարէլ պատարագէր Աստուծոյ քահանայապետ բարի: Եւ մարգարէ՝ զի կոչեաց զանուն կնոջ իւրոյ կեանս, այն որ ի վախճանին ի Մարիամ կատարեցաւ: Եւ զի զայսուսիկ կորոյս յանցանաւքն, վասն որոյ արէնս ստորագրեաց, զի ի կատարածի արինացն՝ ի ճշմարտութիւն հանցէ զիրաւունս երկրորդ Ադամն: Եւ այսոքիկ ընդ արինաւք փակեալ էին, իբրև ընդ ամուր պարսպաւ. իսկ Յովաննէս կայր ի դուռն բակին իբր պահապան այսպիսոյ գանձի, զի ի Տէր կացուցէ զհաւտ իւր՝ հանդերձ ամենայն աշտիճանաւք. և բացցէ զդուռն զաւթին այնմիկ՝ որոյ իւր է իշխանութիւն, որպէս ասաց Յակոբ. զի մի գողք և աւազակք՝ որ յառաջ քան գնա էին, յափշտակեսցեն զհաւտ նորա, որպէս ասաց Տէր մեր: Եւ զի նա էր ճշմարիտ հովիւն՝ որում ձայնի քաղցրութեամբ լսէր հաւտն իւր, նմա երաց դանապանն Յովաննէս՝ վկայեալ առաջի ամենայն հաւտին, թէ Չեւ ևս Քրիստոս, այլ որ զկնի իմ գա(յ), որում չեւ բաշակակն յուժակել զդոյզնարեայ մասն ինչ տնաւ-

1. Բառս անյարմար է տեղւոյս, որուն կամ առաջին տառը խանգարուած է, և կամ դարեւալ կարգաւու է:

2. Փիլոնի հայերէն թարգ-

մանութիւնն (էջ 334) այժմ ունի այսպէս. «Ա՛չ բայք եւ, այլ գործք» = յ. οὐκ εἴματα εἶσαι, ἀλλ' ἔργα.

րինական նորին խորհրդոյն <sup>1</sup>. զի նա է որ մաքրէ զձեզ հոգւով և հրով:

Իբրև մկրտեաց զՅիսուս Յովաննէս, ի նա՛ կացոյց զամենայն աւրինականսն, զՔա՛հանայութիւն, զթագաւորութիւն և զմարգարէութիւն, նա և զամենայն հաւատս առ նա՛ դարձոյց. և ոչ միայն հովիւ երևեցոյց զնա, այլ և փեսա(յ), զի յայտ լիցի՝ եթէ որպէս փոփոխեցան աշտիճանք աւրինացն ի բարձրագոյնսն և յանպատում մեծութիւնս, այսպէս և ժողովուրդն կոչեցաւ ի յաշտիճան հաւտի և ի կարգ և աստուածատեսակ բարձրութիւն: Արդ, այս է խորհուրդ Յովաննու՝ մկրտելն զՔրիստոս, որպէս ասաց Պաւղոս, թէ կատարուին աշրինացն ֆրիստոս <sup>2</sup>. և նա՛ է ճշմարիտ մարգարէն, վասն որոյ ասաց Մովսէս. Մարգարէ յարուցի ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց, իբրև զիս, նմա լը շիջիք <sup>3</sup>: Եւ թագաւորութեան նորա վկայէ Յակոբ, թէ (մի) Պակասեցի իշխան ի Յոռայի՝ մինչև եկեացի այն, որ իշրև է քաղաւորոչիւն <sup>4</sup>: Զի ո՛չ յումեքէ առնու աւժամբ, զի բնութեամբ է թագաւոր, և ոչ նման այլոց: Եւ Քահանայութեան նորա վկայէ Դաւիթ, ասէ. Դո՛ւ ես քահանայ յաշտեան ըստ զաշրուքեան կեկացն ակոյրծիչ <sup>5</sup>. զի բովանդակ զամենայն շնորհս, աւրէնս և աւրինակս առականցն և ստորադրութեան <sup>6</sup> աւրինացն և մարգարէիցն յինքն զըլ-

1. Մարկ. Ա. 7, Յովճ. Ա. 37, գրուած է « խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նորա », ուստի Անանիայի « դոյզ նաքեայ » և այլն խօսքերն՝ աւելի մեկնութիւն կը թուին լինել աւերատանական բանից, քան թէ մի այլ բնագրի տարբերութիւն: Յամենայն դէպս նշանաւոր է և ուշադրութեան արժանի:

2. Պաւղոսի թղթոց մէջ չկայ ճիշդ այս բացատրութիւնս. այլ առ Եփ. Գ. 13 « Ի չափ հասակի կատարման ֆրիստոսի »: Ա. Կորթ. ԺԳ. 10. « Յորժամ եկեացէ կատարումն »: Առ Եբրայ. « Ի կատարումն եկեացումք »: Կող. Գ. 14 « Ար է զօգ կատարման »: Առստի հեղինակի սոյն տեղին աւելի համաձայն է մեր Պատարագի « Կատարումն

օրինաց և մարգ. » աղօթքին:

3. Բ. Օրին. ԺԷ. 15. « Մարգարէ յեղբարց քոց իբրև զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո », նմա լուիջիք:

4. Մենդ. ԽԹ. 10 ուր ընդհակառակն գրուած է՝ « Արոյ իւրն է հակոյերձեալքն »: ուրեմն քաղաւորոչիւն բառն մի այլ բնագրէ յառաջ եկած է:

5. Տես Սաղմ. ՃԹ. 4, ուր սակայն վերջի բառերն են ընդհակառակն « Քահանայ ըստ կարգին Մեղքիսեղեկի »: Առստի, մեկնաբանութեան տեսակետով ուշադրութեան արժանի են հեղինակիս՝ ըստ զաշրուքեան կեկացն ակոյրծիչ բառերը:

6. Աղլելի է ստորադրոչիւն և կամ ստուերագրոչիւն:

խաւորեացէ . զի յամենայն կողմանց թախցեն առակքն ի վերայ նորա և հանկիցեն , որպէս ասաց առաքեալ , թէ Ամենայն գանձք իմաստութեան ի նրա ծածկեալ կան<sup>1</sup> : Եւ իբրև ընդ զլսոյ՝ ընդ ամենայն անդամքն սփռեցան շնորհք իմաստութեան նորա . ի յուշրենեկ նորա ամենեքեան ասաք շնորհս<sup>2</sup> : Ձի գլուխ է նա մարմնոյ եկեղեցւոյ , լրումն՝ որ զամենայն յամենայնի շնու : Այս է լինել նմա լրումն աւրինաց և մարգարէից :

Իսկ որ գրեցաւ վասն նորա , եթէ Եկեացէ հոգւով զարուշրեան Եղիայի<sup>3</sup> , զի էր Յովաննէս յանապատին ոչ նոյն իսկ Եղիայի , այլ զաւրութեամբ հոգւոյ նորա . զի ունէր Եղիա մաշկեակ և գաւտի մաշկեղէն : Չնա թռչունք կերակրէին , և սա ի թռչնոց մարախոյ կերակրէր : Եւ զի սուս ուղտու էր զգեցեալ Յովաննէս , զի չև էր ոչխարն գենեալ , որ ոչ դառնայր ընդդէմ կարչին , այն՝ որ սգեստաւորեաց զմերկութիւն Ադամայ և ծննդոց նորա : Եւ յանդիմանէր նա զՅեղարէլ և զԱքաաբ , և սա զՀերովտիադա և զՀերովդէս : Ձի կռփիչ էր նա Խորայեղի՝ ասելով . Մինչև յերբ կադայք յերկուս ոռս<sup>4</sup> . յանդիմանիչ էր սա Փարիսացւոցն , Մնունդք իժից կոչելով զնոսա : Եւ զի բարձան առ նա ամաք անձրեաժինք , և անժ սով հացի և ծարաւ ջրոյ , որով տանջեաց զԽորայեղ ըստ արժանին . բարձան առ Յովաննու մարգարէքն , որ ցաւղէին յայգին՝ զոր փոխեաց յՆգիպտոսէ , ըստ այնմ . Հրաման<sup>5</sup> տայց ամպոց ի մոց , զի մի տեղացեն յայգի իմ : Ձի աւրէնք և մազգարէք մինչև ցՅովաննէս եկեալ բարձան . զի ոչ երևեցան ամաք անձրեաժինք , մինչև մատոյց զողջակէզսն փայտիւ և հրով և ջրով , որով ասպատա արկ զամաւթոյ մարգարէսն . ասպա հրաման ետ ամպոց ի վերուստ՝ տեղալ անձրեաց , և դալարացուցանել զգաւսացեալ երկիր : Աոյնպէս և աստ ոչ յայտնեցան ամաք երկնատեղեացք , մինչև մատուցաւ ճշմարիտ պատարագն ջրով և հրով , և հրով Հոգւոյն և փայտիւ խաչին . որով ոչ զամաւթոյ սպասաւորսն , այլ նոյն զգլուխ վիշապին ջախեաց , և ասպա հրաման ետ ամպոց՝ որդւոցն Արոաման , որ ի վերուստ հնչեցին՝ ցաւղելով զբանն կենաց , զգաւսացեալ ողիս բանաւորացն ոռս :

1. Կող. Բ. 5, սւր կը գրուի յաւելուածով. « Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան » :

2. Յովհ. Ա. 16

3. Ասւկ. Ա. 17 :

4. Գ. Թագ. ԺԸ. 21, սւր սակայն փոխանակ ոռից՝ « Հեաս » գրուած է :

5. Ասայ. Ա. 6, սւր գրի « պաւտուէր ասց ամպոց իմոց » և այլն :

գեացին ի պտղաբերութիւն արդարութեան: Եւ զի Եղիա էր ճրագ լուսատու, կռփիչ խաւարի, զարթուցիչ թմբրելոց, որպէս ասէ Սողոմոն, թէ Չարթիցեն<sup>1</sup> ի ճայն հառոռն, և ճայն տատրակի շեշի եղև յերկրի մերուս<sup>2</sup>: Եւ զի ճրագ լուսատու է աչաց և կիզիչ մեղաւորաց, զի այրեաց բերանով զյիսունսն Աքաարու, և արեգակնակիզութեամբ հրդեհեաց զԽորայէզ: Եւ զի ճրագ յերեկորեայ լուցանի, իսկ հաւն յառաւաւտուն մերձ ձայնէ. ոմն ղխաւար հալածէ, և ոմն զքուն թանձութեան փարատէ: Չի ի լինել ճրագի յերեկորեայն՝ ոչ գտանի ձայն հաւուն ընդ նմա. իսկ մերձենալ յառաւաւտուն ի ձայնել հաւուն՝ գտանի և լոյս ճրագին ընդ նմա: Սոյնպէս ընդ Եղիայի ոչ գոյր ձայնն Յովաննու. իսկ ի գալ Յովաննու՝ լոյս մարգարէութեան նորա անշէջ պատմիւր ի մէջ Խորայեղի: Եւ զի ճրագ և հաւ ի միում տան բնակեն և գիշերի պիտանան, իսկ ի տուրնջեան ոչ են պիտոյ. սոյնպէս և սոքա ի գիշերի ներգործէին, մինչչև յայտնեալ էր արեգականն արդարութեան. ոչ միում տան, այլ բոլոր աշխարհի: Եւ զի երկոքեան սոքա կռփիչ են խաւարի՝ լոյս ճրագի և ձայն հաւու, մինչև մերժեալ ղխաւարն և զարթուցեալ ղմարդիկ՝ ածցեն ի լոյս տունջեան: Սոյնպէս և մարգարէքն աղաւտ լուսով իւրեանց կռփեցին ղխաւար կռապաշտութեան, մինչև ցՅովաննէս. իսկ նա ձայնիւ զարթոյց մերձ յառաւաւտն ի գործս տունջեան, զի մի եկեալ թագաւորին՝ գտանիցէ զմշակս այգոյն յանգործութեան, և ընդ մէջ կտրեալ այրեսցի անշէջ հրով: Ա՛յս էր գոլն Յովաննու զաւրութեամբ Եղիայի, զի լցցի մարգարէութիւն Մաղաքիա(յ), թէ Ահաշասիկ առաքեմ ղԵղիա թեսրացի, որ դարձոռացի զսիրտս հարց աս որ դիս, ղհաշատս Աքրահամոն՝ աս ծնունդս իշր<sup>3</sup>. կամ զսիրտս հարց աս որդիս իւրեանց՝ յառաքելոցն քարոզութիւնն:

1. Ժող. ժԲ. 4, կը գրուի. «Յարթիցեն ի ձայն հաւուն»:

2. Երգ. Բ. 12:

3. Մաղ. Գ. 5. «Ահաւասիկ ես առաքեմ աս ձեզ ղԵղիա թեզրացի, որ պատրաստեսցի զսիրտս հոր աս որդի, և զսիրտս ասն՝ աս ընկեր իշր»:  
Անանիայի վերջին խօսքերը գեղեցիկ մեկնութիւն են Մաղաքիայ մարգարէութեան «զսիրտըս ասն՝ աս ընկեր իւր» բացատրութեան, և յոյժ հետա-

քըրքրական են Ս. Գրոց մեկնըչաց համար: Իսկ ենթագծուած բառերու զեղչումն և փոփոխութիւնը ցոյց կու տան, թէ նա ըստ թարգմանչաց սովորութեան բերանացի ղիտէր զՍ. Գիրս, և ըստ այնմ անոր միտքը կամ բուն իմաստը կը ջանայր ներկայացընել, քան թէ նիւթապէս բառերը. և այս տեսակետով իսկ նշանաւոր են նորա կոչումները:

Եւ զի ծագումն արուսեկին սգաստացուցիչ է մարդկան՝ պատրաստիլ ի գործս առաւաւտուն , զայս ո՛չ ոք գործէ յայլ աստեղաց . սոյնպէս ո՛չ ոք կարաց յայլոց մարգարէիցն զարթուցանել զմաքաւորոն ի գործ արդարութեան , բայց միայն Յովաննէս : Եւ զի լրումն աւրինացն էր Քրիստոս , իսկ աւրէնքն զնմանութիւն ունի լուսոյ , վասն որոյ լուսնականաւքն վարի . իսկ լուսին ի սկսմանն սակաւ ինչ լուսաւորէ ի գիշերոյն , և առ սակաւ սակաւ աճեալ յաղթէ գիշերոյն , ընթանալով յերկոտասան պարս կենդանաբերացդ . և յերկեակ եւթնեակս ուռճացեալ , լիապատար լուսով լցեալ՝ զբոլոր գիշերն լուսաւորէ : Եւ որպէս ի սկսմանն աղաւտագոյն բերէ զլոյսն յինքեան , սոյնպէս և սակաւագոյն կարէ լուսաւորել զգիշերն : Եւ որչափ աճէ լուսովն ընդդէմ խաւարի , այնչափ սպառէ զխաւարն ի մասանց և ի ժամուց գիշերոյն . զի (առ) սակաւ սակաւ յաղթեալ՝ բարձցէ զիշխանութիւն նորա : Նոյնպէս և աւրէնքն ի սկսմանն սուղ ինչ գործեցին աւգուտ մարդկան . ո՛չ գործովք ինչ արդարութեան , այլ միայն ըմպելեաւք և կերակրաւք և պէտպէս մկրտութեամբ՝ մարմնոյ արդարութեամբ , և ոչ հոգւոյ : Զի առ սակաւ սակաւ աճեցին աւրէնքն և ոչ ըստ ինքեան , այլ գործովք մարդկան , որով կրթեցան նովաւ յաստուածգիտութիւն : Զի գործք մարդկան լնուն զաւրէնս , ի բանից Տեառն յայտ լիցի , զոր ասաց զ(ց)Յովաննէս , թէ Պարտ է մեզ շնոր զարդարոչիւնս . որպէս առաքեալ ասէ . Լրոշմն օրինաց Քրիստոս է <sup>2</sup> : Եւ այլ ազգ ևս լրումն աւրինաց է Քրիստոս . զի ի լրման լուսնին , յորում զբոլոր գիշերն լուսաւորէ յերկեակ եւթնեակն , զենէին զգառնն՝ ազատիչն Խորայելի՝ յեգիպտական ծառայութենէ : Զի և բնութիւն մարդոյն ի նոյն թիւ ամսոց առնու զկատարումն , որով զնմանն իւր կարէ ծնանել : Իսկ ի զենման գառինն՝ լուսապատար լուսինն սկսանի պակասիլ . սոյնպէս և ի լրման աւրինացն՝ զենաւ գառն ճշմարիտ , ազատիչ ամենայն աշխարհի : Եւ յայսմհետէ սկսաւ պակասել լոյս արդարու-

1. Մատթ . Գ . 15 ունի՝ « Այսպէս վայել է մեզ շնոր զառնեալն արդարութիւն » : Մեծ զանազանութիւն կայ ընդ մէջ վայել է և պարտ է բայելլուն , ինչպէս զիտել կու տայ Ասկեբերան ի Մեկնութեան . վասն զի Քրիստոս պէտք չունէր մկրտութեան , այլ միայն վայելուչ համարեցաւ կատարել

զորինադրեալսն : Այս կարծիս Անանիա իսկ կ'արտայայտէ ճառիս մէջ որոշակի . հետեալբար , նորա այս տեղ գործածած՝ պարտ է բացատրութիւնը՝ վայելուչի իմաստով առնուած է :

2. Եփես . Ա . 23 համարին ազատ յառաջբերութիւն է :

թեան արինացն, մինչև բոլորն բարձաւ ի միջոյ, որպէս ասէ առաքեալ, թէ Որ ձիակաւ շահն էր ինձ յարդարու թիւն արինացն, զայն վնաս հաւարիւմ վասն առաւել գիտոշրեանն Քրիստոսի <sup>1</sup>:

Եւ լուսին՝ գիշեր(ի) շրջի յերկոտասան պարս աստեղացն, որք ընդ նմա փայլեն ի գիշերի. սոյնպէս և արէնքն ահարովնեան՝ գնացիւք յերկոտասան ցեղսն Եսրայեղի զընթացն իւր կատարեաց և ծածկեցաւ, զի տեղի տացէ տուրնջեանն. այնպէս բարձան արէնքն, զի տեղի տացեն լուսափայլ աւետարանին քարոզութեանն: Եւ զի ի բոլոր լրմանն յերե(կորեայ) սկսանի լուսինն լուսատու լինել զիշերոյն մինչև ցառաւաւան, զի մի ինչ մնացէ ի խաւարէն անլոյս. զի և ինքն իսկ բոլորովին է լի լուսինն, և ոչ մի մասն ունի թափուր ի լուսոյ: Եւ իբրև կատարէ զբոլոր գիշերն, ի վախճան ընթացից գիշերոյն՝ անդէն շեշտակի ծագէ լոյս արեգականն, զի մի մասն ինչ խաւար՝ սկիզբն առցէ ի մէջ երկուց լուսաւորացն, այլ լոյս ի լոյս հասեալ՝ բոլորն բարձցի ի միջոյ խաւար: Այսպէս և ի կատար ընթացից արինացն՝ եկն եհաս փոյթ ընդ փոյթ արեգակնն արդարութեան Յիսուս, աւծեալն Աստուծոյ. զի մի դարձեալ ընդմիջիցէ խաւար կոապաշտութեանն ընդ մէջ արինացն և Քրիստոսի, այլ զի դարձուցէ գնուազ լոյս լուսնին՝ ի պայծառութիւն արեգականն. և զաղաւտացեալ լոյս արդարութեան արինացն՝ ի լուսափայլ քարոզութիւն աւետարանին, զի լոյս ի լուսոյ յաւելեալ՝ զբոլորն ի միջոյ բարձցեն զխաւար մեղացն: Եւ որպէս լուսինն՝ ի գիշերի ընթանայ հանդերձ կենդանարեւաքն, որ ընդ նմա փայլեն և կատարեն զգիշերն. սոյնպէս և արեգակնն արդարութեան՝ յերկոտասան դասս առաքելոցն, որ ընդ նմա փայլեն ի տունջեան, որպէս ասաց Տէրն. Դուք էք լոյս աշխարհի <sup>2</sup>: Զտիւն ողջոյն կատարեն և լուսաւորեն, որպէս լուսաւորք երկնից՝ ոչ միայն զերկինս, այլ և զերկիր լուսաւորեն: Զինոքա ի բարձանց ի խոնարհ առաքլեն զճառագայթս, իսկ սոքա ի ստորուստ՝ ի բարձունս ծագեն զլոյս զիտութեան,

1. Փիլ. Ք. 7-8, «Եւ յոյժ տարբերութեամբ կը գրուի. «Որ ինչ ինձ շահն էր, զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի. այլ և հաւարիւմ իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել զիտութեան Քրիստոսի Տեսան մերոյ» ։ Առաքելոյն լրածը, այսինքն է՝ արդարու-

թիւն օրինաց, Անանիա մէջ բերած՝ իբրև նիւթ բանից առաքելոյն. իսկ յետագայ երկու նախադասութիւններուն մին զեղծած է, զի երկուքն ևս՝ մի և նոյն միտքը կը յայտնեն:

2. Մատթ. 13. 14:

առ ի լուսաւորել զիշխանութիւնս և զպետութիւնս որ ի յերկինս . յայտնելով զխորհուրդ ծածկեալ յաւիտենիցն և յազգացն , զբաղմապատիկ իմաստութիւնն Քրիստոսի . այն՝ որ բնակեալն է ի նոսա , և նոքաք լուսաւորէին զերկնայինսն : Եւ զայս աւետարանէր Նսայի , լինել երկնից նոր , նորոգե(ա)լ ի գիտութիւն Աստուծոյ :

Իբր և կատարեաց Յովաննէս զընթացսն իւր , առաքեաց հարցանել զՔրիստոս , թէ Գո՛ւն ես որ գալոցն ես , երե այրո՞ւն ակն կաշցո՞ւք <sup>1</sup> : Ոչ եթէ չգիտէր , այլ զի Հրեայքն ուսուցանէ՝ ո՛չ այլում՝ փրկչի ակն ունել , այլ այնմ՝ որ եկեալ հասեալ էր առ նոսա : Եւ զի եկն Յովաննէս բարձրագոյն ճանապարհաւ , որ ոչ էր ումեք գնալի . իսկ Տէրն մեր դիւրին ճանապարհաւ , զի կեանք վարուց նորա՝ առ ի փրկութիւն մարդկան լինիցի : Չոր աւրինակ , ոք զգազան շար ի գառագեղ արկանիցէ , և կայցեն յերկուց կողմանց ի կիրճս ճանապարհաց . այսպէս Յովաննէս անձաշակ լինելովն : Չի թէ գայն հաճեսցին միտք մարդկան՝ առ նա երթիցեն . իսկ եթէ խուսափեսցեն ի նմանէ , իբր անկարող լինելոյ մարդկան տկարութեան , առ Քրիստոս եկեսցեն , որ ուտէր և ըմպէր ընդ մեղաւորս : Իսկ նոքա իբրև զվայրագ և զչար գազան՝ յերկոցունց ապստամբեալ , վասն որոյ առակաւք յանդիմանէր զնոսա Քրիստոս , թէ Նման եւ ժողովորդս այս մանկտոյ , որ ևստիցիև ի հրապարակս , սսե . փող հարաք՝ և ոչ կաքաւեցեք , ողբացաք՝ և ոչ լացեք . և արդարացաւ դատաւտանև ի վերայ որդոցն անհաշանո՞թեան <sup>2</sup> :

Այլ զի էջ Յովաննէս ի դժոխսն իբրև զկարապետ բանին , որպէս Նդիա վերացաւ յերկինս՝ իբրև աւետաքարող վերնոցն : Չի որպէս էր Նդիա աւրինակ Յովաննու , այսպէս և շրջեցաւ լինել Յովաննէս աւրինակ Նդիայի . զի նոյնք՝ զմիմիանց շնորհ ծանուցանեն մեզ : Չի որպէս սա՝ կարապետ առաջին գալստեանն Փրկչին՝ եղև , սոյնպէս և նա՝ վերջին ահաւոր գալստեանն լինելոց է : Որպէս սա յափշտակեաց զմեղաւորս և զմաքսաւորս ի բռնութենէ շարին և անձ առ Քրիստոս , սրբելով ի ջուրսն . սոյնպէս և նա ի վախճանին

1. Ղուկ. է. 20 :

2. Այս տեղիս առնուած է Մատթ. ԺԱ. 16-17 Աւետարանէն . վերջին խօսքերը մեծապէս կը տարբերին բնագրէն , սւր - այսինքն՝ 19 տան մէջ — ըսուած է ընդհակառակն . « Եւ արդարացաւ իմաստութիւն յորդոց իւրոց » . և ո՞վ

կարծէր որ այդ բառերու միտքն ըլլայ « արդարացաւ դարաստանև ի վերայ որդոցն անհաշանոթեան » , եթէ Անանիա չգանէր զայն : Բայց թէ սուտի՞ գտած է կամ ո՞ր թարգմանութեան համաձայն , զայդ կարեն իմանալ հետաքննիչք՝ բաղգատութեան ձեռքով :

յափշտակեցէ զարդարսն ի ձեռաց որդւոյն կորստեան՝ հակառակողին Քրիստոսի, և մատուցանէ առ Աստուած նահատակութեամբն: Այլ զի Յովաննէս, առաջին խոնարհն, գալստեան նորա կարապետ գողով՝ այնչափ բարձրացաւ, որչափ Եղիա, որ գալոց է կարապետ առաջի ահաւոր գալստեան նորա, ևս առաւել լինիցի հրաշագործ զաւրութիւն. զի ոչ ընդ Հերովդէս պարերազմի, այլ ընդ դէմ սկզբնաչար աւձին նահատակի: Չի էջ Յովաննէս ի դժոխս, զուարճացուցանել զարգելեալսն ի նա. զի աւրինակ էր կապեալ դժոխոյ, արգանդ Սառայի և Եղիսաբեթի: Չի ոչ ռք կարաց լուծանել զերկունս կապանաց արգանդից նոցա, մինչև եկն այն՝ որ լուծիչն էր կապելոց. և բանիւ իշխանութեամբ ելոյժ զերկունս Սառայի: Իսկ Եղիսաբեթ՝ որ յղացեալ ունէր զՅովաննէս, աւրինակ էր դժխոց՝ որ յղացեալ ունէր ի կապեալ արգանդին զպարս մարգարէիցն և զամենայն արդարոց: Եւ որպէս ձայն Մարիամու իբրև կարապետ Բանին, զոր յղացեալ ունէր ի ծոց իւր, ազդեաց յականջս Եղիսաբեթի, և խաղաց ցնծալով լռեալ մանուկն յորովայնի՝ ընդ դէմ կուսորդւոյն. սոյնպէս ձայնն Յովաննու՝ իբրև կարապետ առաջի Բանին՝ ազդեաց ի դժոխս, և լռեալ ոգիքն յարգանդի կապեալ դժոխոց՝ խաղային ցնծալով ընդդէմ աղատչին իւրեանց: Եւ որպէս շէր հնար ումեք լուծանել զերկունս մահու և դժոխոց, մինչև եկն եմուտ յարգանդ դժոխոց այն՝ որ իշխանն է մահու. և ինքնիշխան հրամանաւքն ելոյժ զիշխանութիւն մահու: Եւ զի անմեղութեամբ մարդկային մարմնովս էջ նա ի դժոխս, և ոչ ունէր իշխանութիւն մահ թագաւորել ի վերայ նորա. զի արդարութիւն նորա որպէս լերինս, և իրաւունքն՝ որպէս խորք բազումք: Եւ այսպիսի զաւրութեան ոչ կարաց տանել զաւրութիւն դժոխոց, այլ հերձաւ որպէս վեշապն մեծ առ Դանիէլիւ. և ի բաց ետ զբոլոր կլեալսն՝ ի ձեռն այսորիկ, որ եղև անդրանիկ ի մեռելոց. և զկնի նորա ծնցի բազում՝ եղբարք վերստին ի դժոխոց: Եւ եղև նա առաջին պտուղ ննջեցելոց, զի ի ձեռն այսպիսի մաքուր երախայրեաց՝ մաքրիցին վերստին ոգիքն յաղտեղութենէ դժոխոց, և լիցին ընծայ Հար՝ ի հոտ անուշից: Եւ այսպէս լուծեալ զերկունս մահու և գերեալ զգերիչն՝ ամբարձաւ ի բարձունս, ըստ Դաւթա(յ) մարգարէութեան՝. զի լցցէ զա-

1. Սաղմոսի այս ակնարկ թեոս. Ա. 18 համարներու յաւելութիւնս զատ առնելու է աւջբերութիւն է: յաջորդէն, որ Եփեսո. Գ. 10 և

մենայն, և եղիցի յառաջացեալ յամենայնի: Եւ մեք փա-  
ռաւորեսցուք զՀայր և զՊրզի և զսուրբ Հոգ(ի)\*:

\* Քրուածիս ներածութեան մէջ արդէն ըսինք, որ այս երկու  
ճառերու գրութեան սճը նոյն է. այժմ ընթերցողք առիթ ու-  
նենալով զանոնք կարգալու և համեմատելու, պիտի տեսնեն  
ակներև, թէ երկուքին մէջ իսկ մի և նոյն կշռող մտաց  
պայծառ և բարձր գաղափարներն են որ ամենուրեք կ'արտա-  
յայտուին՝ հակիրճ, բայց պերճ և վսեմ բացատրութիւննե-  
րով, մի և նոյն իմաստալից և ընտիր բառերը, որք Ե գարու-  
լեզուական բովէն ելած և ձուլուած են, առանց ինչ աւե-  
լորդաբանութեան և սին սեթեկեթի. մի և նոյն մեկնաբանա-  
կան շաւղով մէջ բերուած են Ս. Քրոց տեղիքն, որոնք նշան  
են կամ նախընծայ թարգմանութեան Քրոց՝ յասորի բնագրէն,  
և կամ թարգմանիչն ինքնին՝ իբրև հմուտ սք ասորի և եբ-  
րայական բարբառոց՝ բացայայտել ուզած է գեղեցիկ կերպով,  
թափանցելով այն բնագրոց անսովոր և բազմանշանակ բանից  
և բացատրութեանց խորը: Պիտի տեսնեն և այստեղ Յովհան-  
նու կարապետին՝ Եղիա մարգարէի և Քրիստոսի հետ, լուսի և  
լուսնի, հաւու և ձայնի, յօդաւոր բարբառի և Բանին իրարու  
հեր եղած բաղբասական նմանաբանութիւնները, ինչպէս ա-  
ռաջին մասին մէջ Յովնանու մարգարէին, Ազամայ, Քրիստոսի  
և այլոց մասին եղածները: Միով բանիւ՝ պիտի տեսնեն երկ-  
ուստեք վարդապետական ամենանուրբ և խորին խորհուրդ-  
ները՝ կենդանի գոյներով տեսարանի վերայ ներկայացնելու  
մի և նոյն բանաստեղծ և ճարտար գրիչը, այսինքն է՝ Անա-  
նիա թարգմանիչն:

Իսկ այն, թէ արդեօք այս ամենայն ստուգիւ Անանիայի՞  
մտաց և գրչին հարազատ արտադրութիւնք են, թէ ընդհա-  
կառակն յոյն կամ ասորի Հայրերէն միոյն առնուած է կամ  
թարգմանուած: Առաջին ճառը բաղբասգելով Եփրեմի, Ոսկի-  
բերանի և Գեննադեայ եպիսկոպոսին ընծայուած նոյնանիւթ  
ճառերուն հետ, բուրբովին անմման գտանք, Փիլսն եբրայե-  
ցւոյն հետ միայն նմանութիւններ կան, որոնք սակայն այն-  
պիսի պայմաններու և պարագայից մէջ են, որով Անանիայի  
ճառը կը մնայ միշտ իբրև ինքնուրոյն և շքեղ գործ մի՝ իւր  
ամբողջական կազմութեամբն և տեսակին մէջ: Իսկ երկրորդը  
առիթ չունեցայ բաղբատելու սերիչ Հարց նոյնանիւթ ամէն ճա-  
ռերու հետ. իսկ որոնց հետ որ համեմատեցի՝ գլխովին տար-  
բեր գտայ: Միայն Յակոբ Արճեցւոյ ճառին հետ կան մի երկու  
անկատար նմանութիւններ: Բայց ես հանդերձ այսու՝ սորա  
ինքնուրոյնութեան վերայ ևս վստահ եմ, զօրութեամբ այն ամէն  
պարագայից, որոնք՝ ըստ առաջնոյն՝ յատուկ են Անանիայի,  
և անդրադարձ ցոլացմամբ յայտնի կը տեսնուին նոյն իսկ  
վերջնոյս վերայ:

Աօթներսրդ գարու սկիզբը ծաղկող Նիրակայ դաւառի Դպրե-  
վանուց նշանաւոր առաջնորդ Բարսեղ Ճոնի կամ Ճոնեանի

համար կ'աւանդուի, թէ Մարկոսի աւետարանի մեկնութիւն մ'այլ գրած ըլլայ, որուն հետ ըսինք որ մեր ճառը սերտիւ կապուած է: Ստուգիւ այսպիսի մեկնութեան մի գոյութեան ապացոյց է, ըստ իս. ժԳ դարու Բարսեղ Մաշկուորի (զոր Հ. Յ. Տաշեան նոյն համարած է ճոնի հետ) նոյն աւետարանի վրայ գրած Մեկնութիւնը, որ վերակազմութիւն համարելի է հին թարգմանութեան, քան թէ բոլորովին նոր թարգմանուած: Եւ իրօք ըսածնուս ապացոյց է նախ տեղ տեղ հին շարադրութեան աչքի զարնող մաքրութիւնը, զոր իբր սակի յեռած է թարգմանիչս՝ իւր արծաթի դարու շարաքանութեան մէջ. ք. Ա.—Թ գլուխներու մեկնութեան պակասը Մաշկուորի բոլոր օրինակներուն մէջ: Պակաս մի՛ որ ուրիշ կերպով չմեկնուիր, բայց եթէ ըսել, որ Բարսեղ ճոնի հին թարգմանութեան Ա. հատորն ամբողջապէս կար ժԳ դարուն, և անտի յառաջ վարեց զիւրն Բար. Մաշկուոր: ճոնի անյայտացած այս մասն հաւանօրէն պիտի պարզէ Անանիայի անուամբ հրատարակած Յաղագս Յովակիմոս Մկրտչի ճառի հարազատութիւնը կամ անհարազատ լինելն, եթէ յայտնուի: Յամենայն դէպս, վերջին խօսքը կը թողունք որ ըսէ մերձաւոր ապագան. իսկ առ այժմ մենք գո՛հ ենք, որ Անանիա անյայտ թողուած թարգմանչի անուամբ յայտնեցինք երկու հրաշակերտ ճառեր, որոնք այսուհետև ախորժով պիտի կարգացունին և կոչուին ի վկայութիւն ապագայ գրուածոց մէջ, իբրև մշակեալ և բարձրախոհ մտաց անմուռանալի յուշարձաններ:





